

A 23.00.02
U - 50

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Միմոնյան Հասմիկ Սարգսի

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»
մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

Երևան -2006

Ատենախոսության բեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր Գ. Մ. ԶեՆՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ՀՀ ԳԱԱ քղրակից-անդամ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ս. ՄԱՆԱՍՅԱՆ քաղաքական գիտությունների բեկնածու Գ. Ա. ՀԱՔԱՐՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2007թ. փետրվարի 7-ին ժամը 14⁰⁰ -ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՒՀ-ի 013 Մասնագիտական խորհրդի միստում: Հասցեն՝ 0025, Երևան, Արժվյան 52,ա:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2006թ. դեկտեմբերի 28-ին:

013 Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար փ.գ.դ., պրոֆեսոր՝

Handwritten signature

Ս. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



405-2007

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Սառը պատերազմի ավարտն ու Խորհրդային կայսրության փլուզումը միջազգային հարաբերություններում հանգեցրին որակապես նոր իրավիճակի հաստատմանը, որը բնութագրվում էր երկբևեռ աշխարհակարգի վերազմամբ ու համաշխարհային քաղաքականության մեջ վճռորոշ դեր ունեցող նոր կենտրոնների ձևավորմամբ: Այս պայմաններում առավել խոցելի վիճակում հայտնվեցին նախկին սոցիալիստական ճամբարի պետությունները: Երբ մինչ այդ նրանք զբղված էին միջազգային հարաբերություններում իրենց խոսքը քաղաքականացնելու հնարավորությունից, ապա այժմ ստիպված էին հատակեցնել իրենց արտաքին քաղաքական կողմնորոշումներն ու պաշտպանել իրենց դիրքորոշումները սրբնրաց կերպով փոփոխվող միջազգային ոլորտում՝ միաժամանակ առավելագույն օգուտներ քաղելով քաղաքակիրթ աշխարհի պետությունների հետ հարաբերությունների հաստատման ու զարգացման գործընթացից: Հայաստանը ևս այն պետությունների շարքում էր, որոնց նետված էին այդ մարտահրավերները: Անկախության հռչակումից հետո Հայաստանը, շատ կարճ ժամանակահատվածում ղեկանագիտական հարաբերություններ հաստատելով տարբեր երկրների հետ ու անդամակցելով քաղաքակիրթ միջազգային կազմակերպություններին՝ մասնավորապես եվրոպական տարածաշրջանում, սկսեց իր առաջին քայլերը կատարել ժամանակակից ինտեգրացման գործընթացներում՝ որպես միջազգային հարաբերությունների ինքնուրույն սուբյեկտ: Չնանցանելով Հարավ-կովկասյան տարածաշրջանում շահեր հետապնդող այնպիսի պետությունների հետ համագործակցության նշանակությունը, ինչպիսիք են Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Իրանը և այլն, ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում որպես առաջնային խնդիր սահմանվեց եվրոպական ինտեգրացման առաջնիկ ակտիվ մասնակցությունն ու որպես հետանկարային նպատակ՝ Եվրոպական միությանն անդամակցությունը: Նման պայմաններում ակնհայտ է հետխորհրդային ժամանակաշրջանում կատարված աշխատանքների, եվրոպական երկրների հետ երկկողմ հարաբերությունների ու եվրոպական միջազգային կազմակերպություններում Հայաստանի անդամակցության արդյունքների ու սուպագա հնարավորությունների համակողմանի տեսական վերլուծության անհրաժեշտությունը ոչ միայն քաղաքական գիտության, այլև միջազգայնագիտության ներկայացուցիչների և գործնական քաղաքականության մշակման համար: Ներկայումս չափազանց կարևոր է ժամրակման բնույթի անբարկել մեր երկրի գործունեությունը և գնահատել դրա արդյունավետությունն այնպիսի վերազգային կառույցներում, ինչպիսիք են Եվրոպայում անվտանգության ու համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ), Եվրոպայի խորհուրդը (ԵՆԽ) ու, վերջապես, Եվրոպական միությունը (ԵՄ), որոնք սպասեցվում են եվրոպական ընտանիքի անդամների միջև կայուն հարաբերություններն ու համագործակցությունը՝ ուղղված այնպիսի խնդիրների լուծմանը, ինչպիսիք են ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացումը, քաղաքացիական հասարակության ինստիտուտների, հասարակության սոցիալական և տնտեսական համակարգերի զարգացման սպասեցվումը՝ հիմնված մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության վրա: Այսօր կարևորագույն խնդիր է նաև ժողովրդավարական անցման ընթացքում նշված կազմակերպությունների պոտենցիալի կիրառման տեսական հայեցակարգերի մշակումը, այդ կառույցների հետ հարաբերությունների հետանկարային քաղաքականությունը: Այս հիմնահարցերի հրատարակությունը պայմանավորել է ատենախոսության բեմայի ընտրությունը, ուր բեմադրվում են ԵԱՀԿ-ին ու ԵՆԽ-ին Հայաստանի անդամակցության ընթացքն ու դրանց հետ համագործակցության ձեռքբերումները, վերջիններիս դերը ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարացման գործընթացում, ինչպես նաև վերլուծվում են ԵՄ-ի հետ հարաբերությունների հաստատման գործընթացն ու հնարավոր զարգացումները:

Հիմնահանգի գիտական մշակվածության աստիճանը: Այդ ներկայացված հարցերը ներկայում շատ հաճախ դասնում են բնմարկումների առանցք ոչ միայն հասարակության շարքային անդամների կողմից, որոնք փորձում են վեր հանել միասնական Եվրոպայի լիարժեք մասը կազմելու ոչ հեռավոր ապագայի դրական ու բացասական հնարավոր հետևանքները, գնահատել եվրոպական չափորոշիչները հայի հոգեկերտվածքի, ավանդույթների, կենսակերպի, և այլ նորմերի տեսանկյունից, այլև տարբեր գիտական շրջանակներում, որոնք փորձում են գիտական մեթոդների կիրառմամբ, համեմատության ու վերլուծության միջոցով քաջահայտել եվրոպական ինտեգրացման գործընթացներին Հայաստանի մասնակցության նշանակությունը, հիմնավորել դրա նկատմամբ տարբեր դիրքորոշումները, և ինչու չէ, նաև զրանցում այս կամ այն աստիճանի մասնակցության նպատակահարմարությունը: Սակայն քեև կատարվել են քաղաքակիրթ ուսումնասիրություններ՝ ուղղված այս կամ այն հարցի լուսաբանմանն ու մեկնաբանությանը, այնուամենայնիվ, քաղաքական համակարգի ժողովրդավարացման հարցում եվրոպական տարածաշրջանում գործառնող կառույցներին ՀՀ անդամակցության նշանա-

կուրյան, ձեռքբերումների, անդամակցության հետևանքների փոխկապակցության ու փոխկախյալության վերականգնման վերաբերյալ համալիր ուսումնասիրություններ հայ քաղաքագիտության մեջ դեռևս գոյություն չունեն: Առկա աշխատություններում հետազոտության առարկան են դարձել եվրոպական կառույցներում ՀՀ անցյալ գործունեությունը կամ հեռանկարներին վերաբերող առանձին խնդիրներ՝ կապված ԵՄ-ի հետ հարաբերությունների այս կամ այն ասպեկտի հետ, այն՝ ¹ հասարակության կողմից եվրոպական արժեքների ընդունելիության, ԵՄ-ին անդամակցության հնարավորությունների գնահատականը, ԵՄ-ի դերակատարության վերլուծությունը Հարավ-կովկասյան տարածաշրջանում լատինալուսնային ու անվտանգության ապահովման գործընթացում, ԵՄ-ի Տվրոպական հարևանության քաղաքականության միջոցով նրա հետ հարաբերությունների սերտացման վերլուծությունը և այլն: Այս առումով հատկանշական են ՀՀ արտաքին քաղաքականության գործնական իրականացման մեջ անմիջականորեն ներգրավված անձանց՝ Ռ.Շուգարյանի, Ա.Ռևանյանի և այլոց աշխատանքները², քաղաքական վերլուծարաններ Ի. Մուրադյանի, Ս. Սարգսյանի և այլ տեսարանների աշխատությունները³, որոնցում քննարկվում են առանձին խնդիրներ, ինչպիսիք են եվրոպական ինտեգրացման գործընթացում Հարավային Կովկասի մասնակցության ուղիները և մոդելները, այդ գործընթացների հնարավոր հեռանկարները Հարավ-կովկասյան պետությունների համար, դրանց ազդեցությունը տարածաշրջանային համագործակցության արդյունավետության վրա, այդ համատեքստում ՀՀ արտաքին քաղաքականության այլընտրանքները և այլն: Սակայն երե եվրոպական ինտեգրացումը և դրան առնչվող վերը նշված խնդիրները դիտարկվում են, առավելապես, ԵՄ-ի հետ կապի մեջ, ապա այստեղ անհրաժեշտություն է առաջանում քննզծել, որ «Եվրոպայա» կամ «Եվրոպական կառույցներ» ասելով՝ պետք է նկատի ունենալ ոչ միայն ԵՄ-ն կամ նրա անդամ-երկրները, այլև այնպիսի կարևորագույն կազմակերպություններ, ինչպիսիք են ԵԱՀԿ-ն և ԵՆԿ-ն, որոնք ժամանակակից եվրոպական արժեքների, հասարակության հիմնասյուներն են: ԵԱՀԿ-ն այն միակ կառույցն է, որն անվտանգության հարցերին ցուցաբերում է համապարփակ մոտեցում՝ դրա համակարգում ներառելով րե՝ ռազմաքաղաքական, րե՝ սոցիալական-տնտեսական ու հումանիտար ոլորտները, իսկ ԵՆԿ-ն՝ կարող են համարվել մարդու իրավունքների պաշտպանության ապահովման քննադատական մեխանիզմներ, որոնք անմիջականորեն ներգրավված են մարմինը: Ուստի պատահական չէ, որ ԵՄ առանող ճանապարհին անխտանալիորեն հասում է ԵՆԿ-ն: ՀՀ համագործակցության գործընթացները այս կազմակերպություններից յուրաքանչյուրի հետ՝ որպես ժողովրդավարական անցման գործիք, ատենախոսության մեջ դիտարկվում են դրանց փոխկապակցության ու փոխկախյալության անհրաժեշտության մեջ:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է, օգտագործելով առկա հետազոտությունների արդյունքները, ուսումնասիրել ու վերլուծել հետաառաջատեսքային ժամանակաշրջանում եվրոպական միջազգային կազմակերպությունների ընդլայնման, այդ կառույցների հետ ՀՀ հարաբերությունների հաստատման ու զարգացման գործընթացները, արժևորել այդ կազմակերպությունների առաջադրած պարտավորությունների կատարման, քաղաքական համա-

¹ Sh'u' Voskanyan A. O komplektnost' i vozmozhnykh modelykh evropeiskoiy integratsii stran Yuzhnoy Kavkaza. "Ot "transkavkazskogo dialoga" k koncepcii regional'noy bezopasnosti". Tbilisi, 17-19 maya, 2003r. Sbornik dokladov III kruglogo stola Yuzhno-Kavkazskogo Instituta Regional'noy Bezopasnosti (SCIRS), [էլեկտրոնային էջ - http://scirs.org/ge/russian/analytic/round_three/voskanyan.htm]; Шугарян Р. Идеи регионального сотрудничества в контексте внешней политики Армении. Статьи. Сборник статей "Ориентир внешней политики Армении". Под ред Г.В. Новиковой: Центр стратегического анализа "Спектр", 2002г.; Аветисян В., Джрбашян Т., Егиазарян А. Концепция стратегии устойчивого экономического развития Армении на долгосрочную перспективу. Экономический ежегодник Армении, N27, 2003г.; «Եվրոպական ինտեգրում: արդյունքներ և հեռանկարներ» կար սեռանի կայքերից, Հայաստանի Եվրոպայի ճանապարհին, նյութերի ժողովում, ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, Ֆրիբուրգ Երևոն հիմնադրամ, Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, Անտարես, 2005թ.: Շուգարյան Ռ, «Արժևավոր արտասահմանից մինչև նոր հարևանություն», հոդված, Հայաստանի Եվրոպայի ճանապարհին, նյութերի ժողովում, ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, Ֆրիբուրգ Երևոն հիմնադրամ, Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, Անտարես, 2005թ. և այլն:

² Sh'u' Myradjan I. Interests Evropejskogo Sojuza na Yuzhnom Kavkaze i Karabaxskaya problema. Статьи. Пешақар "21-րդ դար", թիվ 3(5), 2004թ.: Саркисян С. Коррекция системы безопасности на Южном Кавказе. Статьи. Центр стратегического анализа "Спектр", 2005г., [էլեկտրոնային էջ - www.spectrum.am/rus/articles.php]; Martirosyan T. Armenia's Foreign Policy: Complementary or Confortable?. International Eurasian Institute for Economic and Political Research, Washington DC, 2004, [էլեկտրոնային էջ - www.iiie.org/armenia.pdf] և այլն:

³ Եվրոպայում ԵՄ-ի անդամ հանդիսացող բոլոր պետությունները նախապես անդամակցել են ԵՆԿ-ին:

կարգի ժողովրդավարացման, սահմանադրական կարգի բարեփոխումների ընթացքը, համագործակցության արդյունքներն ու հեռանկարները, ինչպես նաև մշակել գործնական առաջարկություններ՝ ապահովելու համար եվրոպական ընտանիքին ինտեգրման գործընթացի արդյունավետությունը: Այս նպատակների իրագործման ճանապարհին առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- > ուսումնասիրել հետխորհրդային տարածաշրջանում ԵԱՀԿ-ի և ԵՆԿ-ի ընդլայնման պայմաններն ու ընթացքը.
- > վերլուծել այդ կազմակերպությունների առջև առանձնապես պարտավորություններն ու կատարման գործընթացը.
- > դիտարկել ու գնահատել այդ պարտավորությունների իրականացման արդյունքները ՀՀ ներկայիս կյանքի քաղաքական ոլորտում՝ հատկապես, 2005թ.-ին ՀՀ Սահմանադրության մեջ ընդունված փոփոխությունների առնչությամբ, վերլուծել դրանց ազդեցությունները ՀՀ քաղաքական համակարգի տարբեր ինստիտուտների բարեփոխումների, և իր ամբողջության մեջ՝ համակարգի ժողովրդավարացման վրա,
- > քաջատեսալել ԵՄ-ի հետ ՀՀ հարաբերությունների ձևավորման ու զարգացման ընթացքը.
- > վերլուծել ՀՀ-ԵՄ հարաբերությունների ապագա զարգացման միտումները, հիմնավորել եվրոպական ինտեգրացման գործընթացների շրջանակներում ՀՀ գործունեության դրական հեռանկարների հնարավորությունը.
- > ուսումնասիրել Եվրոպայի հետ ՀՀ համագործակցության խորացման խնդիրը տարածաշրջանում վճռողը դեր ունեցող այնպիսի խոշոր պետությունների հետ հարաբերությունների համատեքստում, ինչպիսիք են, մասնավորապես, ԱՄՆ-ը և Ռուսաստանը:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսությունը հայ քաղաքագիտական մտքի մեջ առաջին փորձն է՝ համակարգված ձևով վերլուծել նշված բոլոր կառույցների՝ որպես Եվրոպայում գործող իմիմական միջազգային կազմակերպությունների հետ Հայաստանի ներկայիս հարաբերությունները, քաջատեսալել դրանց ազդեցությունը ՀՀ ժողովրդավարական անցման գործընթացի վրա, ինչպես նաև վեր հանել այդ կառույցների հետ համագործակցության հեռանկարները ՀՀ արտաքին քաղաքականության «փոխլրացման» սկզբունքի կիրառման միջոցով: Փաստորեն, ատենախոսության մեջ եվրոպական ինտեգրացման վերաբերյալ գոյություն ունեցող օտարերկրյա գրականության, եվրոպական երկրների ու կառույցների հետ ՀՀ համագործակցության մասին առկա հետազոտությունների, արհիվային նյութերի իմիմ վրա առաջին անգամ ամբողջական ու համակարգ կերպով ուսումնասիրվել ու համակարգվել են եվրոպական ինտեգրացման և Հայաստանի համար այդ հարաբերությունների հետևանքները, դրանց դրական և բացասական ասպեկտները, այդ արդյունքների նշանակությունը ներպետական ոլորտում, քաղաքական հարաբերությունների ու ինստիտուտների բարեփոխման և միջազգային ասպարեզում երկրի հետագա գործունեության ու զարգացման համար: Լեռնային հատկապես ոլորտում արդյունքների ամօրյությամբ՝ ուսումնասիրությունը կատարվել է քաղաքական համակարգի ժողովրդավարացման հարցում դրանց դերի, իսկ արտաքին քաղաքականության առնչությամբ՝ առավելապես ԵՄ-ին ինտեգրվելու հեռանկարների տրամաբանությամբ: Վերը նշված խնդիրների համար առաջադրված լուծումները պայմանավորել են ատենախոսության քննարկի ուսումնասիրության արժեքն ու նշանակությունը, որոնք ներկայացվել են որպես կատարյալ հետազոտության արժանավոր մի շարք եզրահանգումներով ու առաջարկություններով: Վերջիններս անմիջական են ատենախոսության վերջաբանում: Այսպիսով՝

- համակարգված ու հիմնովին ուսումնասիրվում և գնահատվում է հետխորհրդային տարածաշրջանում ԵԱՀԿ-ի և ԵՄ-ի գործունեության ընդլայնման և ԵԱՀԿ-ին ու ԵՆԿ-ին Հայաստանի անդամակցության գործընթացը,
- ելնելով քաղաքական շահավետության անհրաժեշտությունից՝ ցուցադրվում է ՀՀ կողմից եվրոպական տարածաշրջանային ինտեգրացմանը որպես առաջնություն ու սահմանելու կարևորությունը,
- եվրոպական կառույցների հետ հարաբերությունների ձևավորման ու զարգացման գործընթացների մոտակայքային վերլուծության և ներառվում Հայաստանի ինքնիշխանության և քաղաքականության վարման ինքնուրույնության ապահովման տեսանկյուններից: Գիտականորեն հիմնավորվում է, որ Հայաստանի համար կարևորագույն խնդիրներից է հետակցվել ինտեգրացման գործընթացներում ներգրավման բույսատրեիի աստիճանն ու պահպանել հավասարակշռություն վերը նշված խոշորագույն կենտրոնների հետ հարաբերություններում՝ նկատի առնելով, որ ցանկացած ինտեգրացում, առավել ևս միջազգային կառույցների հետ, ենթադրում է ինքնիշխանության որոշակի կորուստ,
- հիմնավորվում է մի կողմից Հայաստանի, և ընդհանուր առմամբ, Հարավ-կովկասյան տարա-

ժայռայանի և, մյուս կողմից, Եվրոպայի՝ ի դեմս այնտեղ գործառնող միջազգային կառույցների ու առանձին եվրոպական երկրների երկկողմ ու փոխադարձ շահագրգռվածությունը խորացնել առկա համազորակցությունը ու ընդգծվում է դրանց միջև հարաբերությունները հավասարության, և ոչ թե ենթակայության սկզբունքի հիման վրա կառուցելու անհրաժեշտությունը:

- մանրամասն քննարկում են ենթարկվում ԵԱՀԿ-ում և ԵԽ-ում Հայաստանի անդամակցության արդյունքները քաղաքական ոլորտում, «ներառյալ՝ դատական և քննչական համակարգերի, տնտեսական ինքնակառավարման քննադատի վերափոխումները՝ եվրոպական պահանջներին համապատասխան, ու կառուցելու ղեկավարում միտված նախաձեռնությունները: Ընդունելով դեռևս քաղաքական խնդիրների լուծման ու քննադատումների վերացման անհրաժեշտությունը՝ հիմնավորվում է, որ վերջը նշված ոլորտներում արդեն առկա ձեռքբերումներն ամփոփել են հետագա քաղաքականությունների ու Հայաստանի ժողովրդավարացման նպատակի իրագործման համար: Առանձնահատուկ կերպով ընդգծվում է վերջումվում է ՀՀ-ում սահմանադրական քաղաքականությունների գործընթացի կարևորությունը: Յուրյ է տրվում, որ այն հիմնական փոփոխություններն ու նորամուծությունները, որոնք առկա են ՀՀ նոր Սահմանադրության մեջ, համապատասխան կիրառման պարագայում միանշանակորեն կնպաստեն ՀՀ քաղաքական համակարգի, դրա ինստիտուտների միջև հարաբերությունների ժողովրդավարացման ու քաղաքական մշակույթի «եվրոպականացմանը»:

- ներկայացված փաստարկները բույլ են տվել զայ այն եզրակացություն, որ եվրոպական քննադատի հետ համագործակցությունը՝ Հայաստանին՝ որպես նրա մի մասը համարվող պետությանը, հնարավորություն է տվել շոշոկների առաջընթաց արձանագրել ժողովրդավարական սկզբունքների արմատավորման, ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական ու սոցիալական ոլորտներում եվրոպական չափորոշիչների ներդրման ու բարեփոխումների իրականացման առկայությունը: Սակայն միաժամանակ առաջ է ներկայացվում այն գաղափարը, որ անհրաժեշտ է նաև ընտրողաբար մտածել Եվրոպայի «առաջարկին»՝ մասնավորապես, երբ այն վերաբերում է մշակութային յուրօրինակությանը, քանի որ այսօր Հայաստանի համար հայի ազգային ինքնության պահպանման խնդիրն առավել քան արդիական է:

- ՀՀ քաղաքական համակարգի վերափոխումների ուսումնասիրությանը քաղաքականություն է, որ ԵԱՀԿ-ում և ԵԽ-ում անդամակցությունն իրական նախադրյալներ կարող է ստեղծել ԵԱՀԿ հետ ազգային սերտ համագործակցություն հաստատելու և հետևանքաբար դրան անդամակցելու համար,

- **Մեթոդականորեն** տեսության մերտաբարանության կիրառմամբ, որի առաջնություն է կազմում ոչ այնքան ինտելեկտուալ արդյունքներ, որքան դրա բուն գործընթացի ուսումնասիրությունը՝ հարուստ փաստական նյութի հիման վրա ներկայացվում է ԵԱՀԿ հետ ՀՀ հարաբերությունների ձևավորման ու զարգացման ողջ ընթացքը, քննարկվում և մեկնաբանվում են ԵԱՀԿ հետ համագործակցության արդյունքները:

- փաստարկվում է այն գաղափարը, որ ԵԱՀԿ կողմից շեշտադրվող «քաղաքական պայմանավորվածություն» սկզբունքը կարող է անարդյունավետ գտնվել հետխորհրդային տարածաշրջանի երկրների, այդ թվում նաև Հայաստանի քաղաքական համակարգի ժողովրդավարացման գործընթացում, եթե «քաղաքական վճար-քաղաքական շահույթ» հավասարակշռությունը ոչ ուղիղապես լինի,

- առանձին մասով վերլուծվում են ԵԱՀԿ հետ հարաբերությունների հնարավոր հետևանքները՝ Հարավ-կովկասյան տարածաշրջանում տերությունների կողմից հետապնդվող շահերի ու գործունեության՝ Հայաստանի համար ունեցած նշանակության համատեքստում:

Հետազոտության հենքը և աղբյուրները: Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության, եվրոպական ինտելեկտուալ և սրանց առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրությունը եղել է առավելապես միջազգային հարաբերությունների մասնագետների մեծաշնորհը: Սակայն այդ գործընթացների խորացման ու ընդլայնման հետ մեկտեղ դրանք ներառված են նաև հարակից ու միջառարկայական գիտական ուղղությունների քննադատ: Այսօր այն դարձել է նաև քաղաքականության վերլուծության առարկա: Ուսումնասիրելով, ընդհանրապես եվրոպական ինտելեկտուալ, և մասնավորապես, եվրոպական միջազգային կազմակերպությունների գործունեությունն ու դրանց հետ տարբեր պետությունների անդամակցությանը վերաբերող աղբյուրները՝ համոզվում ենք, որ այդ հարցերն առավել հիմնովին մշակված են արևմտյան քաղաքագիտական մտքի ներկայացուցիչների կողմից: Սա լիովին արդարացված է, քանի որ հենց Արևմուտքն է նախաձեռնել այդ գործընթացը, որին հետագայում մասնակից են դարձել նրա արևելյան հարևանները, այդ թվում նաև հետխորհրդային տարածաշրջանի պետությունները: Ի լրումն սրան մենք, որ մեռչունկցիոնալիզմը, որի ինտելեկտուալ վերաբերյալ ամենաազդեցիկ տեսություններից մեկն է, համախոս բնորոշվում է որպես «ԵԱՀԿ շրջանակներում ինտելեկտուալ մերտա», քանի որ, համաձայն գիտական ոլորտներում առկա

կարծիքի, տարածաշրջանային ինտելեկտուալ առավել հաջողված ու դինամիկ տիպը ԵԱՀԿ-ն է, և դա պայմանավորում է, որպեսզի տարածաշրջանային ինտելեկտուալ գործընթացների վերլուծությանն ուղղված տեսությունների մեծամասնությունը հիմնվի եվրոպական փորձի վրա:

Այսպիսով, առեճակոտության մեջ Եվրոպայում ինտելեկտուալ գործընթացների լուսաբանման, եվրոպական կառույցներին տարբեր պետությունների անդամակցության, ԵԱՀԿ ընդլայնման ընդհանր տեսական մշակման համար հիմք են հանդիսացել Գ.Միտրանի, Է.Հասսի, Դ.Դիմանի, Ս. Ջորջի, Փ. Լեխայի և այլոց աշխատությունները՝: Այս նպատակով օգտագործվել են նաև Եվրոպայի հեղինակավոր համալսարանների ու հետազոտական կենտրոնների տրամադրած նյութերը, ինչպիսիք են Հաասայում Նիդերլանդների «Clingendael» միջազգային հարաբերությունների ինստիտուտի, Վինն-ճայի դիվանագիտական ակադեմիայի կից գործող Խաղաղության ու հակամարտությունների կարգավորման հետազոտությունների ավստրիական կենտրոնի տրամադրած նյութերն ու փաստաթղթերը: Ինչ վերաբերում է այդ գործընթացներում կոնկրետ Հայաստանի ներգրավվածությանն ու գործունեությանը, ապա ինչպես նշել ենք, հայ քաղաքագիտական մտքում դեռևս համադրա քաղաքական են այդ հարցերին նվիրված հիմնադար աշխատությունները: Սակայն առեճակոտության քննախոսության համար ուսումնասիրվել և կիրառվել են ինչպես հայրենական հեղինակներ Ի.Մուրադյանի, Գ.Նովիկովայի, Գ.Հովհաննիսյանի, Ա.Հարությունյանի, արևմտյան քաղաքագիտական ոլորտներին կից գործող Տ.Մարտիոսյանի, Ա.Նաչատրյանի և այլոց՝ եվրոպական ինտելեկտուալ գործընթացներում Հայաստանի մասնակցության առանձին հիմնահարցերին նվիրված ուսումնասիրությունները, այնպես էլ դրանց առնչությամբ ՀՀ-ում գործնական քաղաքականության մեջ անմիջականորեն ներգրավված այնպիսի պետական ու քաղաքական գործիչների հողվածներն ու իրավաբանությունները, ինչպիսիք են Ռ.Շուքարյանը, Ա.Ռեզակյանը, Տ.Ջորջյանը և այլքը՝: Եվրոպական ինտելեկտուալ առնչվող տարածաշրջանային խնդիրների շուրջ տեսակետներին ու վերլուծություններին ժանրաբանալոր համար օգտագործվել են նաև Ադրբեյջանի ու Վրաստանի, ինչպես նաև դրանց վերաբերյալ ուսու և արևմտյան տեսարանների հետազոտությունները (Ի. Հուսեյնովա, Գ.Չուբարաշվիլի, Ս.Կարապետով, Գ.Ֆիգուերոլա, Տ.Հարրիս և այլք)՝: Նշենք, որ առեճակոտության համար արդյունաբերական հիմք են հանդիսացել նաև ՀՀ Արտաքին գործերի նախարարության արխիվի ֆոնդային նյութերը, Հայաստանում ԵԱՀԿ-ի ու ԵԽ-ի գրասենյակների, Եվրոպական համաձեռնակողի ներկայացուցչության տեղեկատվական ու վերլուծական ժողովածուները, հրատարակումները, ԵԽ-ի, ԵԱՀԿ մարմիններ՝ Եվրոպական խորհրդարան, Եվրոպական համաձեռնակող, ինչպես նաև ԵԱՀԿ-ի կենտրոնական հեղինակի կատարած ուսումնական և գործնական այցերի արդյունքում ձեռքբերված նյութերը՝ ներառյալ այդ կառույցների որոշումները, քանակները, համաձայնագրերը և այլ փաստաթղթերը:

Հետազոտման առարկան: Այսպիսով, առեճակոտության հետազոտման առարկան է *եվրոպա-*

¹ Sh'u' Mitrany D., Working Peace System, Chicago: Quadrangle Books, 1966; Mitrany D., The Functional Theory of Politics, London: Martin Robertson 1975; Haas E., The Uniting of Europe: Political, Social and Economic Forces 1950-1957., Ann Arbor, MI: 1996; Dinan D. Ever Closer Union, An Introduction to European Integration. 2nd edition, Boulder (Co.), London, 1999; Reforming the European Union: From Maastricht to Amsterdam. Ed.: P.Lynch, N.Neuwahl, G.Wyn Rens. - Harlow etc.; London, 2000; Stephen George, Ian Bache, Politics in the European Union. Oxford University Press, 2001 *և այլք*:

² Տե՛ս՝ Շուքարյան Ռ. «Եվրոպական արտասահմանց միջև երբ հարևանություն», հոդված, Հայաստանը Եվրոպայի ճանապարհին, նյութերի ժողովածու, ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, Զրիցիկս Երևան հիմնադրամ, Համահարա հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, Մեծաթիկ, 2005թ.: Восстановление А. О комплексе отношений и возможных моделях европейской интеграции стран Южного Кавказа, "От "транскавказского диалога" к концепции региональной безопасности", Тбилиси, 17-19 мая, 2003г. Сборник докладов III круглого стола Южно-Кавказского Института Региональной Безопасности (SCIRS), Էլեկտրոնային էջ՝ http://scirs.org.ge/russian/analytic/round_three/voskanyan.htm .; Аванесян В., Джрбашян Т., Егизарян А., Концепция стратегии устойчивого экономического развития Армении на долгосрочную перспективу. Экономический ежегодник Армении, N27, 2003г. *և այլք*:

³ Международные отношения: теория, конфликты, организация. Под ред. П.А. Цыганкова, Альфа-М, Москва, 2004г.; Гусейнова И., Расширение Европы и Южный Кавказ. Стаття, журнал социально-политических исследований "Центральная Азия и Кавказ", 4(34), Центр социально-политических исследований "Central Asia and the Caucasus", Швейцария, 2004г.; Зурбабшвили Г., Южный Кавказ на пути к Европе. Стаття. Журнал "Центральная Азия и Кавказ" N4 (34), 2004г.; Trevor C. Hartley, European Union in a Global Context: Text, Cases and Materials. Cambridge University Press, 2004 *և այլք*:

կան միջազգային կազմակերպություններին Հայաստանի անդամակցության գործընթացը, այդ կառույցների հետ հարաբերությունների հետևանքները քաղաքական համակարգի ժողովրդավարացման ասպարեզում և դրանց գաղափարային հետևանքները: Այդ գործընթացների պատկերն էլ ավելի ամբողջական դարձնելու համար մասնակի հետազոտման առարկա են դարձել ԵԱՀԿ-ին ու ԵԽ-ին Հայաստանի անդամակցության ողջ ընթացքը, այդ կառույցների կողմից երկրին ներկայացված պահանջների դերը ժողովրդավարական բարեփոխումների գործընթացում, քաղաքական ինստիտուտների ու հարաբերությունների որակական փոփոխությունները՝ եվրոպական նորմերին ու արժեքներին համապատասխան, ԵՄ-ի հետ հարաբերությունների ձևավորումն ու ընդլայնումը՝ որպես ժողովրդավարական անցմանը նպաստող գործոն: Սակայն հետազոտության առաջնությունն առարկաներն են անդամակցության ներպետական արդյունքները և ձեռքբերումները, որոնք դիտարկվում են որպես անհրաժեշտ նախապայմաններ ԵՄ-ի հետ հարաբերությունների սերտացման ու հետանկարում հնարավոր անդամակցության համար: Նկատի ունենալով, որ Եվրոպայի լիարժեք անդամ լինելը ներառում է հավանաբարությունների առկայության բացառում կամ, առնվազն, դրա նվազագույն հնարավորություն, և որ եվրոպական ինտեգրացման հիմնարար նպատակներից է ներգրավված պետությունների անվտանգության ասպեկտումը՝ անդամ դարձնելով կատարվում են այդ կազմակերպությունների շրջանակներում ԼՂ հակամարտության կարգավորման ամենաարագ չէ գործունեության ու բանակցային գործընթացի արդյունավետության ավաիտվման մեջ այդ կազմակերպությունների ունեցած ներդրման հարցերին: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս խնդիրը բազմաթիվ գիտնականների հետազոտության առարկան է և դրա վերաբերյալ առկա են մեծաքանակ աշխատություններ ու հրատարակումներ, ստեղծագործության մեջ հեղինակն այն չի դարձրել խոր ուսումնասիրության առարկա՝ խնդիրն արժարժեքով զուտ հայացիկ ձևով:

Հետազոտման ընդհանուր մեթոդաբանությունը: Առեմախտությունը գրված է քաղաքական գիտությունների բնագավառում օգտագործվող գիտական հետազոտության արդի մեթոդների ու սկզբունքների, ինչպես նաև հետազոտության այնպիսի հասնողահանուր մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են *ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները*: Վերջիններս, ըստ էության, այն մեթոդներն են, որոնք քաղաքագիտական մտքի հայտնի տեսարանները *ՎՊուզայն* ու *ԱՄոլոլյով* անվանում են *ընդհանուր տրամաբանական մեթոդներ*: Ինչ վերաբերում է քաղաքագիտության մեջ համախառն կիրառվող մեթոդներին, ապա խոսքի են օգտագործվել են *համակարգային և գործընթացային մոտեցումները*: Եվրոպական լիարժեքությանը ՀՀ ինտեգրման, եվրոպական չափորոշիչների ներդրման արդյունքների գնահատման համար մեթոդաբանական հիմք է հանդիսացել *արժեքային-նորմատիվ մեթոդը*, որի միջոցով այդ գործընթացների հետևանքներն արժևորվել են Հայաստանի քաղաքական համակարգի բարեփոխման, ներքին քաղաքական խնդիրների լուծման, արտաքին քաղաքականության արդյունավետության բարձրացման համար դրանց ունեցած նշանակության տեսանկյունից, և վեր են հանվել դրանց դրական ու բացասական կողմերը: Եվրոպական կառույցների հետ հետագա համագործակցության ու զարգացման համար անհրաժեշտ գործունեության և Հայաստանի համար հնարավոր հետևանքների տեսարանման համար օգտագործվել է *կամրատեսանման մեթոդը*: *Կոնտենտ-փերլուծությունը* բույլ է տվել վերլուծել վերը նշված կազմակերպությունների տարբեր տեսարանային փաստաթղթերը:

Առեմախտության տեսական և գործնական նշանակությունը: ԵԱՀԿ-ի, ԵԽ-ի ու ԵՄ-ի հետ ՀՀ համագործակցության հիմնախնդիրը իր ամբողջության և փոխկապակցվածության մեջ, ներկա հետազոտության շրջանակներում առաջին անգամ դարձել է քաղաքական գիտության համակողմանի և համակարգավոր մոտեցումային առարկա: Առեմախտությունը պարունակում է մի շարք մտնեցումներ, տեսակետներ, գիտական ուսումնասիրության արդյունքներ և գործնական առաջարկություններ, որոնք կարող են կարևոր նշանակություն ունենալ դիտարկվող հիմնահարցերի վերաբերյալ պատկերացումների և գիտելիքների հարստացման համար: Այդ գաղափարները հիմք կարող են ծառայել սույն և հարակից բնագավառի ուսումնասիրությունների համար, որոնք պահանջը ներկայիս ժամանակաշրջանում, երբ Հայաստանն իր ողջ քաղաքական ու տնտեսական ներուժն ուղղել է եվրոպական ընտանիքի հետ լիարժեք ինտեգրմանը, քաղաքական զգալի է: Նշված հիմնահարցերի վերաբերյալ ստացված և գիտակամորեն հիմնավորված արդյունքներն օգտակար կլինեն ինչպես Հայաստանին, այնպես էլ այլ երկրներին ինտեգրացման գործընթացների զարգացման միտումների բացահայտման, դրանց առնչվող քաղաքական հետազոտությունների համար: Բացի այդ առեմախտության առանձին հարցադրումներն ու դրանց վերլուծությունները կարող են օգտագործվել միջազգային հարաբերությունների և քաղաքագիտության արդի տեսության բուսական գաղափարացման:

Ինչ վերաբերում է առեմախտության գործնական նշանակությանը, ապա այն, առաջին հերթին, նրա ճանաչողական բնույթի մեջ է. եվրոպական կառույցներին ՀՀ անդամակցության արդյունքների բացահայտումն ու հետանկարները կերտում են հետազոտությանը և ընձեռում մշակել և ամբողջացնել այդ կառույցների հետ համագործակցության մոդելները: Նրանում տեղ գտած եզրահանգումներն ու առաջարկությունները կարող են օգտակար լինել ներքին ու արտաքին քաղաքականության մեջ գործնականում ներգրավված անձանց, պետական ու քաղաքական գործիչներին՝ Եվրոպային ինտեգրվելու բարձր ու երկարաժամ գործընթացներում բարոսակ որոշումների կայացման, առավել արդյունավետ ու ճիշտ կողմնորոշման ընտրության գործում:

Առեմախտության փորձաքննությունը: Առեմախտությունը ընմարկվել է հրատարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի «Քաղաքագիտության» ամբիոնում: Առեմախտության որոշ դրույթներ ընմարկվել են Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի «Համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների» ամբիոնում և երաշխավորվել են տպագրության Քաղաքագիտության ֆակուլտետի խորհրդի որոշմամբ: Աշխատանքի հիմնական բովանդակությունը հրատարակվել է հեղինակի 1 մեմուարությունում, 2 հոդվածներում և 1 գիտատղովի նյութերի ժողովածուում:

Առեմախտության կառուցվածքն ու ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (որոնցից յուրաքանչյուրն ունի երկու ենթագլուխներ), վերջաբանից, 105 անվանում պարունակող օգտագործված գրականության և սկզբնաղբյուրների ցանկից: Հեղինակի հրատարակումների ցանկը ներկայացված է 1 էջի վրա: Աշխատանքի հիմնական նյութը շարադրված է 144 էջի վրա, իսկ ընդհանուր ծավալը 3 հավելվածների հետ միասին՝ 158 էջ է:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է բնմայի արդիականությունն ու հրատարակությունը, ներկայացվում է ընմարկվող հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը, ցույց են տրվում հետազոտության նպատակն ու խնդիրները, վեր է հանվում ուսումնասիրության առարկան, ներկայացվում են հետազոտության հենքն ու աղբյուրները, ուսումնասիրության ընդհանուր մեթոդաբանությունը, ցույց է տրվում առեմախտության գիտական նորույթն ու հիմնավորվում է հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլուխը կրում է «Եվրոպական կառույցների ընդլայնումը և նրանց ՀՀ անդամակցության գործընթացը» խորագիրը:

«Եվրոպական միջազգային կազմակերպությունների ընդլայնումը հետվտանդանական տարածաշրջանում» ենթագլուխը նվիրված է ԽՍՀՄ-ի փլուզմանը հաջորդած ժամանակաշրջանում եվրոպական տարածաշրջանում գործառնող հիմնական կազմակերպությունների, այն է՝ ԵԱՀԿ-ի, ԵԽ-ի, ինչպես նաև ԵՄ-ի ընդլայնման գործընթացների վերլուծությանը:

Նախ և առաջ ներկայացվում են այդ ժամանակաշրջանին բնորոշ միջազգային իրադրության առանձնահատկությունները, երբ 1989թ. երկրորդ կեսի ժողովրդավարական հեղափոխությունների, ստոր պատերազմի ավարտի արդյունքում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի պետությունների համար ամենահարատալ խնդիրներից մեկը դարձավ իրենց արտաքին քաղաքականության նոր գերակայությունների ստանձնումը՝ առաջնությունը տալով ԵԽ-ի, ԵՄ-ի, ՆԱՏՕ-ի և այլ եվրոպական միջազգային կազմակերպությունների հետ ինտեգրացման գործընթացին: Միաժամանակ փաստարկվում է, որ վերջիններս, իրենց հերթին, կանգնեցին նորաստեղծ իրավիճակում իրենց դերի հստակեցման, հետխորհրդային երկրների հետ հարաբերությունների հաստատման անհրաժեշտության, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի անվտանգության ոլորտում առաջացած խնդիրների լուծման և եվրոպական տարածաշրջանում կայունության ավաիտվման լրջագույն հիմնահարցերի առջև: Առեմախտության մեջ դիտարկվում են վերը նշված կազմակերպություններից յուրաքանչյուրի ընդլայնման և նոր անդամներով համալրման գործընթացների առանձնահատկությունները, վեր են հանվում նշված զարգացումների արդյունքում դրանցից յուրաքանչյուրի համար առաջ եկած հրատարակ խնդիրները:

ԵԱՀԿ-ն միակ կազմակերպությունն է, որը բնութագրվում է անվտանգության հարցերին ցուցաբերվող համապարփակ մոտեցմամբ՝ ներառելով *քաղաքական, տնտեսական-կործակական և հումանիտար չափումները*: Սակայն կոնկրետ փաստերի վկայակոչմամբ ցույց է տրվում, որ երկրներն աշխարհակարգի պայմաններում անհնար է եղել պահպանել հավասարակշռությունը նշված չափումներ:

րի միջև, ինչը պայմանավորված էր մի կողմից արևմտյան աշխարհի, և մյուս կողմից՝ ԽՍՀՄ-ի կողմից հետապնդվող շահերի առանձնահատկություններով. երե վերջինս ձգտում էր II համաշխարհային պատերազմի արդյունքների իրավաստանական ամրագրմանը՝ շեշտը դնելով քաղաքական գամբրյալի վրա, ապա արևմուտքն առավել կարևորում էր հունանիտար ոլորտը՝ որպես արևմտյան արժեքային համակարգի տարածման միջոց: Եվ չնայած, որ այդ կազմակերպության ընդլայնումից հետո որոշ փորձեր կատարվեցին՝ հավասարակշռելու համար ԵԱՀԿ-ի գործունեությունը, այնուամենայնիվ, մերկայումս կազմակերպությունն առավել արդյունավետ գործառնում է հունանիտար չափման ոլորտում, ինչն էլ բույլ է տալիս եզրակացնել, որ 21-րդ դարում ԵԱՀԿ-ն կգործի բացարձակապես մեր որակով, այն է՝ ոչ թե որպես համընդգրկուն անվտանգության, այլ «ժողովրդավարության կոլեկտիվ անվտանգության» ապահովման մեխանիզմ:

ԵՆԻ-ի որպես մարդու իրավունքների ու օրենքի գերիշխանության հիմնահարցերով անամասնագիտացված եվրոպական կազմակերպության համար ևս 1989թ.-ը դարձավ շրջադարձային տարի՝ հանգեցնելով դրա անդամության համալրմանը նախ Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի, այնուհետև մերկայիս ԱՊՀ-ի երկրներով: Առեմնախտության մեջ վեր են հանվում տվյալ կառույցին այդ երկրների անդամակցության շարժառիթները: Յույց է տրվում, որ նախկինում տոտալիտար վարչակարգի մերքո գտնվող երկրների, այդ բվում նաև Հայաստանի համար, ԵՆ-ում անդամակցությունն անհրաժեշտ ժողովրդավարական բարեփոխումների ու ժողովրդավարական անցման հաջողության իրական հնարավորություն էր:

Ինչ վերաբերում է ԵՄ-ին, ապա դրա նկատմամբ խորհրդային կառավարությունների բացասական դիրքորոշումը կրկին պայմանավորված էր ստոր պատերազմի տրամաբանությամբ, և արևմտյան պետությունների միավորման ցանկացած գործողություն, որի վառ օրինակ էր հենց ԵՄ-ն, դիտարկվում էր որպես սոցիալիզմի դեմ պայքարում համաշխարհային ինվերսիայի դիրքերի ամրապնդում: ԵՄ-ԽՍՀՄ հարաբերությունների առնչությամբ առեմնախտության մեջ առանձնացվում է մի քանի փուլ. առաջին դրական տեղաշարժերն այդ հարաբերություններում նկատվում են 70-ական թթ.-ից՝ կապված արևմտյան և արևելյան ճամբարների միջև լարվածության բուլցման հետ, իսկ ավելի հատկանշականը՝ 1988թ. ԵՄ-ի հետ պաշտոնական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ ԽՍՀՄ Արտաքին գործերի նախարարության առաջարկն էր: Սակայն հեղինակը շրջադարձային է համարում նաև 21-րդ դարի սկիզբը, երբ ԵՄ-ի կազմի մեջ մտան դեռևս ոչ վաղ անցյալում խորհրդային ճամբարի քաղկացուցիչ մաս հանդիսացող Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի 10 պետություններ, ինչը պայմանավորեց ԵՄ-ի համար որակական փոփոխությունների գործընթացի սկիզբը:

«Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությանը և Եվրոպայի խորհրդին չէ ինտեգրման գործընթացը» ենթադրում նախ քննարկվում է Հայաստանի համար մշտապես արդիական «կողմնորոշման» խնդիրը, այսինքն՝ չէ սոցիալ-քաղաքական ու մշակութային զարգացման համար որակապես տարբեր ուղիների ընտրության հարցը: Այս համատեքստում առաջ են քաշվում մի շարք այլընտրանքներ, որոնց շարքում են *մերքին տարածաշրջանային ինտեգրացումը, կողմնորոշումը դեպի Արևմուտք կամ դեպի Արևելք*՝ բացահայտելով յուրաքանչյուր տարբերակի առանձնահատկությունները, դրանց կողմից ընձեռվող հնարավորություններն ու հնարավոր վտանգները: Ներկայացված այլընտրանքները դիտարկվում են չէ համար իրատեսակ լուծում պահանջող այնպիսի հարցերի լուծման անհրաժեշտության տեսանկյունից, ինչպիսիք են քաղաքական համակարգի ժողովրդավարացումը, տնտեսական առաջընթացը, մշակութային ճորձերի տեսանկյունից ընդունելի ու հարազատ միջավայրի ընտրությունը, առկա հավանաբարությունների կարգավորումը, միջպետական համագործակցության կազմակերպության և այլն: Դեպի այս կամ այն բևեռը կողմնորոշումը առաջին հերթին ենթադրում է սոցիալական համակարգի տարբեր փոխկապվածության անբացառելի ու համամայնեցված աշխատանք: Երե իրավիճակը դիտարկվեք գործնական քաղաքականություն տեսանկյունից, ապա առավել բնականը պետք է լինեք Հարավ-կովկասյան ճեքին տարածաշրջանային ինտեգրացումն ինչպես բուն տարածաշրջանի պետությունների, այնպես էլ նրա հարևանների միջև: Եվ իրոք, 90-ականների սկզբին մեծածավալ և լարված վիճակը Հարավային Կովկասի զարգացման հնարավոր ուղիների վերաբերյալ արագ արձագանք գտան երեք երկրներում: Այնուամենայնիվ, բոլորիս հայտնի պատճառները (հավանաբարություններ, քաղաքական տարածաշրջանային մշակութային տարբերություններ, պատմական անցյալի ժառանգություն և այլն) բարդացնում են այդ ինտեգրացումը կյանքի կոչելը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիտարկվող այլընտրանքներից յուրաքանչյուրը մեր երկրի

համար կարող է ապահովել որոշակի շահավետ պայմաններ, հիմնավորվում է միջազգային հարաբերություններում Հայաստանի կողմից փոփոխացման հիմնարար սկզբունքի որոշեցման ճշմարտացիությունը: Նստ վերջինիս Հայաստանն իր արտաքին քաղաքական հարաբերությունները կառուցում է ոչ թե ուժերի մրցակցության կամ հակադրման, այլ դրանց միջև գործընկերության ու միմյանց լրացման հիմքի վրա՝ միաժամանակապես արդյունավետ հարաբերություններ գաղապացնելով մեր կենսական միջավայրում գործող և հետադարձություն ունեցող բոլոր ուժերի հետ, ինչի շնորհիվ հնարավորություն է ստեղծվում ոչ միայն պահպանել, այլև խորացնել սերտ հարաբերություններ ինչպես Ռուսաստանի, Եվրոպայի, ԱՄՆ-ի, այնպես էլ տարածաշրջանի մի շարք հարևանների հետ: Ռուսի աջ լույսի մերքո եվրոպական երկրների հետ հնարավորին չափ կայնացված հարաբերությունների զարգացումը հույսովի է որպես չէ արտաքին քաղաքական գերակայություններից մեկը՝ դառնալով փոփոխացման քաղաքականության քաղկացուցիչ: Միաժամանակ ցույց է տրվում, որ զարգացման եվրոպական ուղին է, որ այսօր կարող է առավել խթանել ոչ միայն չէ ներպետական զարգացումները, այլև Հարավ-կովկասյան տարածաշրջանի մակարդակով միջպետական համագործակցությունն ու աշխարհի առավել զարգացած երկրների հետ հարաբերությունների ակտիվացումը: Տվյալ համատեքստում էլ լուսարանվում է ԵԱՀԿ-ին ու ԵՆ-ին չէ ինտեգրման ընթացքը:

Վերջինիս համար, հետազոտելով ինտեգրացման վերաբերյալ գոյություն ունեցող առավել հեղինակավոր տեսությունների՝ ֆունկցիոնալիզմի և ճեռֆունկցիոնալիզմի ներկայացուցիչների (Մ.Միտրանի, Է.Հասնի, Ա.Էտզոնի, Լ.Լիդերբերգ) մտնեցումները, առավել նպատակահարմար է ընդունելի է համարվում ճեռֆունկցիոնալիզմի մերթադարձության կիրառումը: Նեռֆունկցիոնալիզմն անխտասփելի է համարում որոշակի վերագրային կառույցի, «մեր քաղաքական հանրություն» ի հայտ գալը, որը հիերարխիայի մեջ, կարծես, վեր է կանգնում պետություններից: Եվ, ի տարբերություն ինտեգրացման այլ տեսությունների, այն չի փորձում կամխատեսել ինտեգրացման վերջնական արդյունքը՝ սակնի մեծ ուղադրություն դարձնելով ինտեգրացման բուն գործընթացի մեխանիզմի վերլուծությանը, ինչը կատարվում է նաև առեմնախտության որոշ խնդիրների ուսումնասիրության ընթացքում:

Ինչպես նշեցինք, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո իր հերթին զգալիորեն աճել է Եվրոպայի հետադրությունը Կովկասյան տարածաշրջանի նկատմամբ՝ կապված իր հարավ-արևելյան սահմանների անվտանգությունն անմիջական վերահսկողության տակ վերցնելու, ինչպես նաև Աճողովկասում նախկին և գազի հարուստ ռեսուրսների օգտագործման հետ: Եվրոպայի մուտքը տարածաշրջան տեղի է ունենում վերը ներկայացված կառույցների շրջանակներում, որոնք իրականացնում են այդ «ներխուժումը»: Մասնավորապես Հայաստանի քաղաքական հարբությունում Եվրոպան մասնակցում է ԵԱՀԿ-ի ռազմա-քաղաքական կառույցի շրջանակներում փորձելով գտնել Դարաբանության հիմնահարցի կարգավորման ուղիները: ԵՆ-ն, որի իրավասությունների մեջ են մտնում հասարակական սեկտորի խնդիրները, տարածաշրջանի հիմնախնդիրների լուծման հիմքում դնում է առավելապես հումանիտար հարցերը՝ սոցիալական կացությունը, փախստականների հարցերը և այլն: ԵՄ-ն՝ համընթացաբար առաջին հերթին տնտեսական միություն, առաջարկում է զարգացնել տնտեսական ինֆրակառույցները, տրանսպորտային հաղորդակցությունը և այլն: Այսպիսով, ակնհայտ է, որ Եվրոպան «հարձակում է գործում» հասարակական կյանքի բոլոր ոլորտներում և բոլոր ուղղություններով:

Երկրորդ գլուխը՝ «Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությանը և Եվրոպայի խորհրդին չէ անդամակցության ներքաղաքական հետևանքները» նվիրված է այդ կազմակերպությունների անդամակցությանը Հայաստանի ստանձամ պարտավորությունների վերաբերյալն ու չէ քաղաքական համակարգի ժողովրդավարացման գործընթացների համար դրանց դերի լուսարանմանը:

«Չ պարտավորությունները ԵԱՀԿ-ի և ԵՆ-ի շրջանակներում» ենթադրում մի կողմից առանձնացվում է ԵԱՀԿ-ի ու ԵՆ-ի առաջադրած պարտավորությունների վերլուծությունը, և մյուս կողմից դրանց դիտարկվում են իրենց փոխկապակցվածության մեջ: Այս առումով նշեցք, որ գոյություն ունեն քաղաքիվ ոլորտներ և հարցեր, որոնք խնդր առարկա են և՛ ԵԱՀԿ-ի, և՛ ԵՆ-ի շրջանակներում (օրինակ, չէ պարտավորությունները ԵԱՀԿ-ի և ԵՆ-ի առջև համընկնում են ոչ միայն մարդկանց առանձին իրավունքների հետ կապված օրենսդրական բարեփոխումների ոլորտում, այլև դատավարական բնագավառում): Եվ, ըստ էության, հանդիսանալով այդ կազմակերպությունների անդամ Հայաստանը հնարավորություն ունի լայնորեն օգտագործել դրանց ներումն այդ խնդիրներին լուծում տալու և Եվրոպական չափորոշիչներին համապատասխանեցնելու համար՝ օգտվելով նաև այն իրողությունից, որ այդ կազմակերպություններն ակտիվորեն համագործակցում են, հատկապես, օրենսդրական բարեփոխումներին օժանդակության առումով:

Փաստարկվում է այն գաղափարը, որ նախկինում լայնորեն կիրառվող այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «միջազգային համագործակցությունն» ու նույնիսկ «միջազգային համագործակցությունը», այլևս ամբողջությամբ չեն արտացոլում նոր գործընթացների, արդի միջազգային հարաբերությունների սուբյեկտների, և, մասնավորապես, միացյալ Եվրոպայի պետությունների միջև հարաբերությունների էությունը: Եվրոպական տարածաշրջանային ինտեգրացումն արդեն հասկացվում է նման համագործակցության սահմաններից դուրս: Ինչպես նշում է Յու. Յունանչև, «**Ինքն-պահանջ հանրությունը վառ օրինակ է, որը բայց է տալիս հասկանալ, որ նոր պայմաններում անդամ-պետություններն առավել լայն բովանդակություն են դնում միջպետական համագործակցություն հասկացության մեջ, և դա նրանց թելադրում է վարքագծի նոր մտղել ու պայմանավորում իրենց հարաբերությունների բնույթը տվյալ կազմակերպության հետ**»: Այսինքն, այսօր գանկացած պետություն, որն ուզում է համարվել եվրոպական հանրության քաղաքացու, մաս, այդ թվում նաև Հայաստանը, պարտավոր է որդեգրել այդ հանրությանը բնորոշ խաղի կանոնները: Այ կերպ ասած, նպատակ ունենալով դառնալ լիարժեք եվրոպական պետություն՝ Հայաստանը պարտավոր է անդամաձեռն քայլեր ձեռնարկել համապատասխանելու համար եվրոպական չափանիշներին ինչպես քաղաքական համակարգի կառուցվածքի և հասարակական հարաբերությունների, այնպես էլ այդ հարաբերություններում կիրառվող միջոցների տեսանկյուններից:

ԵԱՀԿ-ի առաջադրած պարտավորությունների առնչությամբ նշվում է, որ քաղաքացիական, քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների դաշտում սահմանվել են պետությունների կողմից պահպանման համար պարտադիր ընդհանուր չափորոշիչներ: Մինչդեռ, օրինակ, ԵՆԻ-ի դեպքում գործ ունենր արդեն կազմակերպության իրավական փաստաթղթերի՝ թե՛ ուղղակիորեն, թե՛ կոնկրետ անդամ-պետության համար դրանցից բխող հաստիկ պարտավորությունների հետ: Այսինքն, ԵԱՀԿ-ի շրջանակներում պետությունների պարտավորությունները հենց այն սկզբունքներն ու պահանջներն են, որոնք անմիջականորեն սահմանված են կազմակերպության հիմնադիր և այլ փաստաթղթերում, և որոնք կատարվում են ազգային, պետական մակարդակով՝ ներպետական հիմնախնդիրների լուծման ընթացքում դրանց հետևելու միջոցով: Դրա եզրակացություններից մեկն այն է, որ պետություններն իրականացնեն ստանձնած պարտավորությունները՝ միակողմանի հռչակագրերի միջոցով՝ դրանք ընդգրկելով իրենց իրավական համակարգերում: ԵԱՀԿ-ի պարտավորությունները կարող են իրականացվել նաև պետությունների սահմանադրությունների միջոցով, ինչը նկատվում է հիմնականում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի պետությունների օրենսդրական բարեփոխումների գործընթացների համատեքստում: Պարտավորությունները համախ օգտագործվում են նաև որպես հիմնադրույթներ ներքին, սեփական օրենսդրության մշակումների ընթացքում՝ օրենսդիրների համար ծառայելով որպես օրենքների բնույթ կանխորոշող ուղեցույցներ: Սրանով այդ պարտավորությունները, կազմելով տվյալ պետության իրավական համակարգի քաղաքացուցիչ մասը, անուղղակիորեն դառնում են պարտադիր պետությունների ներքին դատական կամ վարչական օրենսդրության բարեփոխվող ոլորտներում:

Մանրամասնորեն վերլուծվում են ԵԱՀԿ-ի վերը հիշատակված երեք չափումներին վերաբերող պարտավորությունները՝ առանձնահատուկ կարևորություն տալով ռազմա-քաղաքական գործընթացի խնդիրներին, այն է՝ ժողովրդավարական բնորոշությունների ապահովմանը, հակամարտությունների կարգավորմանը բացառապես խաղաղ միջոցներով, տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումներին՝ որպես իշխանության ապակենտրոնացման անհրաժեշտ պայմանի, հակակոռուպցիան պայքարին, ինչպես նաև հումանիտար չափանիշ վերաբերող այնպիսի հարցերին, ինչպիսիք են ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը, խոսքի, մտքի, խղճի ազատությունը, գանգալածային լրատվության միջոցների անկախության ապահովումը և այլն:

Ինչ վերաբերում է ԵՆԻ-ին, ապա դրա առջև ստանձնած պարտավորությունները վերաբերում են քաղաքական համակարգի ժողովրդավարացման ու քաղաքացիական հասարակության կայացման համար անհրաժեշտ մի շարք միջազգային իրավական գործիքների ստորագրմանն ու վավերացմանը, համապատասխան ներպետական իրավական բարեփոխումներին, մարդու իրավունքների ոլորտում անհրաժեշտ իրավական ու ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացմանը: Դրանք ուղղված են տեղական ինքնակառավարման, սոցիալական իրավունքների պաշտպանության, դատախազական համակարգի վերափոխման, բնորոշական համակարգի, ժողովրդավարական համակարգերի բնորոշ քաղաքական ինստիտուտների՝ ներառյալ քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, անկախ ՀՋԼՄ-ների և այլ կառույցների կայացման ու սրանց հետ կապված մի շարք այլ հիմնահարցերի լուծմանը: Սակայն համաձայնությունների կատարման գործընթացի

մանրագրին ուսումնասիրության հիման վրա ցույց է տրվում, որ ոչ միայն այն ընթացում է քաղաքական դանդաղ՝ խախտելով կազմակերպությունների սահմանած ժամանակացույցերը, այլև իրականացվող փոփոխությունները դեռևս բազմաթիվ իբրություններ են պարունակում ու դեռ պահանջում են լրացուցիչ անդրադարձեր: Սակայն, միաժամանակ, հիմնավորվում է, որ Հայաստանն արդեն զգալի առաջընթաց է գրանցել քաղաքացիական հասարակություն ու իրավական պետություն հիմնելու ճանապարհին, և որ վերոնշյալ բարեփոխումների ազդեցությունը թե՛ ներքաղաքական, թե՛ արտաքին քաղաքական ոլորտում արդեն իսկ նկատելի է: Ավելին, առաջ է քաշվում այն հիմնահարցը, թե առավել զլորալ առումով ապագայում ինչպիսին է լինելու ընթացող գործընթացների ազդեցությունը՝ կապված, հատկապես, մշակութային ինքնության, պետական ինքնիշխանության ազդեցությունը՝ կապված, հատկապես, մշակութային ինքնության, պետական ինքնիշխանության արդյունքում, ապա և հաջորդիվ լուսարանվում են նշված պարտավորությունների կատարման ներդրաբազան հետևանքներն ու կանխատեսումներն են արվում հնարավոր զարգացումների առնչությամբ:

«ՀՀ քաղաքական համակարգի վերափոխումները ԵԱՀԿ-ին և ԵՆԻ-ին անդամակցության համատեքստում» ենթադրվող մեծ մասամբ նվիրված է վերջինիս, որ, քացի եվրոպական կառույցների ինտեգրման արդյունք հանդիսացող ՀՀ թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական ու սոցիալական դաշտերի ինստիտուցիոնալ զարգացման դիտարկումից, առանձնացվում են նաև մի քանի ոլորտներ, որ առավել ակնհայտ են քաղաքական ինստիտուտների ու հարաբերությունների համակարգի վրա վերը նշված կազմակերպություններում ՀՀ ընդգրկման ազդեցությունները: Դրանք են **տեղական ինքնակառավարման և դատական համակարգերը, կոռուպցիայի դեմ պայքարի քննազուտը և բնորոշական համակարգը**: Սա բայց է տվել առավել համակարգված բնույթ տալ քաղաքական համակարգում ԵԱՀԿ-ին և ԵՆԻ-ին Հայաստանի անդամակցությամբ պայմանավորված հետևանքների վերլուծությանը: Նշված ոլորտները պայմանավորում են իրենց ամբողջությամբ մեջ քաղաքական համակարգի գործառնության բնույթը, հարաբերությունները քաղաքականության տարրեր սուբյեկտների միջև: Այս առնչությամբ, առանձնահատուկ կարևորություն է տրվել նաև 2005թ. ՀՀ Մանրամասնությունում կատարված հիմնական փոփոխությունների վերլուծությանը, քանի որ ԵՆԻ-ի առջև ստանձնած մի շարք պարտավորությունների իրականացումն անմիջականորեն կախված է այդ փոփոխությունների ընդունման հաջողությունից:

Այսպես, տեղական ինքնակառավարման ոլորտում վերլուծությունն իրականացվում է պետական իշխանության ապակենտրոնացման գործընթացի, տեղական ու տարածքային ինքնակառավարման մարմինների աշխատանքի արդյունավետության ու, ընդհանուր առմամբ, տեղական և տարածքային մակարդակներում ժողովրդավարական նորմերի ու հարաբերությունների արմատավորման տեսանկյունից: Դատական ոլորտում առավելապես դիտարկվում են դատական ինստիտուտների և դրանց գործառնության մեխանիզմների կատարելագործման գործընթացները, և դրանց նշանակությունը իշխանության այս ճյուղի անկախության ու անաշտության ապահովման համար, ինչը ժողովրդավարական քաղաքական համակարգերի հիմնական առանձնահատկություններից է: Հայտնի է, որ միայն այդ դեպքում է հնարավոր ապահովել իշխանության 3 ճյուղերի հավասարակշռումն ու մարդկանց պաշտպանվածությունը պետական իշխանության կամայականություններից:

Որպես դատական համակարգի պատշաճ գործառնության անմիջականորեն առնչվող խնդիր՝ դիտարկվում է նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի գործառնությունը: Այս հիմնահարցը կարևորվում է այժմանով, որ երե դատական համակարգի մարմինները մարդու իրավունքների պաշտպանության պետական մեխանիզմներն են, ապա օժիտյանի ինստիտուտը հասարակական մեխանիզմն է, որը կարող է գործառնել ոչ պակաս արդյունավետությամբ՝ պետական մարմինների հետ փոխլրացման ու փոխգործակցության սկզբունքների հիման վրա:

Մանրամասնորեն լուսարանվում է նաև Հայաստանում պետական մակարդակով կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացը՝ եվրոպական կազմակերպությունների անդամակցության համատեքստում: Հայտնի է, որ կոռուպցիան հետխորհրդային նորանկախ պետությունների իշխանությունների առջև ծառայած կարևորագույն հիմնախնդիրներից է, և այն առկա է ոչ միայն պետական իշխանական շրջանակներում՝ ընդգրկելով բոլոր մակարդակները, այլև բազմաբնույթ դուստրոններով՝ հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Խնդրի լուծումն էլ՝ ավելի է բարդանում՝ կապված այն հանգամանքի հետ, որ կոռուպցիայի մեծ ծավալները բերել են իշխանության նկատմամբ հասարակության մայրաքաղաքի անվտանգությանը՝ կասկածի տակ դնելով ժողովրդավարական արժեքները, խարաբելով քաղաքական, տնտեսական ու սոցիալական զարգացումը: Այն խաղաղում է քա-

լով հասկացվում է, որ Եվրոպան ոչ անզամ երկրների հետ իր տնտեսական հարաբերությունների զարգացումն ու խորացումն ուղղակիորեն պայմանավորում է այդ երկրների քաղաքական համակարգերի՝ ժողովրդավարության եվրոպական մոդելի օրինակով վերափոխման տեմպերով ու հաջողություններով: Սակայն հիմնվելով ժողովրդավարական համախմբման գործընթացն անցած այլ երկրների փորձի, ինչպես նաև խնդրի շուրջ առկա մի շարք տեսարանների մոդելների ու տեսակետների ուսումնասիրության վրա, պարզաբանվում է, որ այդ սկզբունքը կարող է անարդյունավետ գտնվել՝ այլ հետխորհրդային երկրների շարքում նաև Հայաստանի համար, եթե ժողովրդավարացման համար քաղաքական համակարգի, և առաջին հերթին, իշխանության կողմից «վճարվող գինը» չարդարացվի «ստացվող շահույթով»: Խնդիրն այն է, որ քաղաքական համակարգի ժողովրդավարացման համար անհրաժեշտ լինելու ցերեքի ներդրումն այնքան է սահմանափակվում կառավարությունների անկախությունն ու իշխանությունը, որ նրանք պատրաստ չեն լինում «նման գին վճարել»: Եթե ԵՄ-ի առաջադրած պայմանները հանգեցնելու են դե ֆակտո վարչակարգի փոփոխությանն ու խարխիլելու են առկա համակարգը և քաղաքական իշխանության դիրքերը, ապա ժողովրդավարացման գործընթացը, որպես կանոն, դատապարտվում է անհաջողության, քանի որ գործող կառավարությունները, որոնք այդ գործընթացի համակարգողն ու ընթացիկ վիճակի վերլուծության վրա՝ առավել հանգամանորեն անդրադարձ են սեփական իշխանության պահպանումը: Այստեղից կատարվում է եզրակացություն, որ ԵՄ-ի անդամակցության առավել տեսանելիությունը և ներքին արտադրաման համար վճարվող «ցածր գինը» առանձին վերցրած՝ անհրաժեշտ, իսկ միասին վերցրած՝ նաև քաղաքական պայմաններ են ժողովրդավարացման գործընթացի հաջողության համար:

«Հայաստան - Եվրոպական միություն հարաբերությունների հետևանքները տերությունների տարածաշրջանային շահերի համատեքստում» ենթազխում ՀՀ եվրոպական կողմնորոշման քաղաքականությունը քննության է առնվում Հարավ-կովկասյան տարածաշրջանում համաշխարհային ուժային կենտրոնների հետ հարաբերությունների համադրմամբ: Հիմնվելով ԵՄ-ի հետ Հայաստանի համազորակցության սկզբնավորման ու ընթացիկ վիճակի վերլուծության վրա՝ առավել հանգամանորեն անդրադարձ է կատարվում այն խնդրին, թե որն է ՀՀ համար դրա կարևորությունը՝ եվրոպական համությունն ինտեգրման գործընթացում:

Փաստարկվում է, որ այսօր տարածաշրջանում ռազմավարական շահեր հետապնդող խոշոր պետությունների հետ ՀՀ հարաբերությունները հիշեցնում են «ժողովրդավար-համակարգ» երկխոսությունը, մինչդեռ նման երևույթից ցամաքային է խոստանվել և ձգտել փոխադարձաբար արդյունավետ համագործակցության ու իրավահավասար հարաբերությունների: Այս նպատակով առաջարկվում է հավասարակշռել արտաքին քաղաքական հարաբերությունները թե՛ Ռուսաստանի, թե՛ ԵՄ-ի ու ԱՄՆ-ի հետ՝ հաշվի առնելով, որ սրանցից յուրաքանչյուրն իր ուղղյակ շահերն է հետապնդում մեր տարածաշրջանում: Այստեղ կրկին առաջ է գալիս է աշտափին քաղաքականության փոխարցման սկզբունքի արդիականության խնդիրը, որի իրականացումը միայն կարող է բույլ տալ հավասար գործընկերային հարաբերություններ պահպանել ու զարգացնել միջազգային հարաբերությունների վերը նշված բոլոր խոշորագույն սուբյեկտների հետ: Միաժամանակ առանձնահատուկ կարևորվում է, որ իրավահավասար հարաբերությունների կառուցման գործընթացում չպետք է չափազանցվի Հայաստանի դերը, քանի որ ոչ Ռուսաստանի, ոչ Եվրոպայի համար ՀՀ դերակատարությունը, հատկապես տնտեսական առումով, այնքան մեծ չէ, որպեսզի այս կամ այն կողմնորոշումը նրանց համար ստեղծի յուրջ վտանգներ: Սա, իհարկե, վերաբերում է ոչ այնքան աշխարհաքաղաքական, որքան տնտեսական կողմնորոշմանը, քանի որ աշխարհաքաղաքական տեսանկյունից Եվրոպայի համար Հայաստանը, կազմելով Հարավ-կովկասյան տարածաշրջանի մասը, ունի իսկապես կարևոր նշանակություն: Ռուսի պատահական չէ, որ Հարավ-կովկասյան տարածաշրջանը՝ իր ստրուկտուրային մեջ, և ոչ թե նրա առանձին երկրներն են այսօր հետաքրքրում ԵՄ-ին՝ որպես իր ռազմավարական շահերի հանգուցակետ:

Ավելին, նշենք, որ տարածաշրջանային մոտեցումն ամրագրվել է նաև Եվրոպական հարևանության քաղաքականությանը: Նման «փաթեթային» մոտեցումը, ամբողջ, անհետն է տարածաշրջանի յուրաքանչյուր երկրում ժողովրդավարացման տեմպերը և գրանցած առաջընթացը՝ դրանով իսկ ավելի երկարաձգելով հնարավոր անդամակցության գործընթացը: Սակայն ԵՄ-ի նման դիրքորոշումը քաջատրվում է այն հանգամանակով, որ 2004թ. ընդլայնման արդյունքում 10 նոր պետությունների մուտքը ԵՄ հանգեկցրեց ներքին ճգնաժամի, որի հիմնական պատճառը ժամանակից առաջ ընկած համաեվրոպական ինտեգրացման գործընթացների անհամապատասխանությունն էր եվրոպական քաղաքակրթական պետությունների կողմից դրանց հարմարվելու պատրաստակամության աստի-

ճանին: Հավելենք, որ 2007թ. հունվարի 1-ից դրան են միանալու նաև Բուլղարիան և Ռումինիան, որով ԵՄ-27-ն իրենից ներկայացնելու է տարբեր պետությունների միավորում, որոնց հիմնադրաքաղաքականությունների միջև լինելու են նախկինում տարբերություններ, այն է՝ չափերը (խոշոր և փոքր պետություններ), զարգացման ու քարեկեցության մակարդակները (հետխորհրդային և զարգացման միջին մակարդակի), հասարակական համակարգերի հասունությունը (կայացած շուկայական տնտեսություն ու զարգացած ժողովրդավարություն և անցումային փուլում գտնվող համակարգեր), աշխարհագրական դիրքը (Եվրոպա-հարավ, արևմուտք-արևելք): Իսկ սրանք, իրենց հերթին պայմանավորելու են ԵՄ-ի ներսում միջպետական հարաբերությունների էլ ավելի մեծ կոնֆլիկտայնությունը:

Բազմաթիվ եվրոպացի քաղաքական գործիչներ ու վերլուծաբաններ, որոնք Հարավային Կովկասն ու Կենտրոնական Ասիան դիտարկում են որպես աշխարհաքաղաքական ոլորտներ, ուր տեղի է ունենում մրցակցություն ԱՄՆ-ի, եվրոպական առաջատար պետությունների, Ռուսաստանի ու Շապուրիայի միջև, գտնում են, որ եվրոպական կառույցները, և այսօր, մասնավորապես, ԵՄ-ն առավել արդյունավետ միջոցներ ունեն ընդհանուր առմամբ Հարավային Կովկասի վրա ազդեցության, և առանձին վերցրած՝ դրա երկրների խնդիրների լուծման համար: Հինք ընդունելով այս հանգամանքը՝ առնաձայնության մեջ բնաբերվում են այն հնարավորությունները, որոնք կարող են առաջ գալ Եվրոպական հարևանության քաղաքականության (Ե-ՀԶ) մեջ Հայաստանի ներառումից: Ե-ՀԶ-ն Հայաստանին կարող է առաջարկել ավելի խոր տնտեսական ինտեգրում, քաղաքական ու մշակութային կապերի սերտացում, վերտահմանային համագործակցության ակտիվացում և համատեղ պատասխանավորում՝ հավանաբարությունների կանխման ու կարգավորման հարցերում: Հայաստանը կարող է օգուտներ քաղել արտաքին առավել քարեկեցական պայմաններից, շուկաների քայքայումից, որը կհանգեցնի ԵՄ-ի հետ շուկաների առավել խոր ինտեգրման: Այս ամենը կարող է խթանել սեփական տնտեսական առաջընթացը, ինչն առավել արդիական խնդիրներից է, քանի որ ԵՄ-ի տարբեր գործընկերի միջոցով տրամադրվող օժանդակության ու ԵՄ-ի առանձին երկրների անհատական ներդրումների շնորհիվ միայն անհնար ենք համարում կայուն ու շարունակական տնտեսական աճի ապահովումը:

Այսպիսով, ԵՄ մուտքը նրան անդամակցելու ցանկացող պետությունների համար երկարաժամկետ հետևանք է՝ պայմանավորված, առաջին հերթին, տնտեսության հետաձանցությամբ, ինչպես նաև այդ երկրների արտադրողների համար եվրոպական շուկաների անհասանելիությամբ, այսինքն, իրականում, ԵՄ-ի անդամ դառնալը բավականաչափ «թանկ հաճույք է»: ԵՄ-ն չի պատրաստվում պարզապես լրացուցիչ թեղ վերցնել իր ուսերին, իսկ Հայաստանն, իր հերթին, չպետք է «բեռ» հանդիսանա նրա համար: Եվ քանի որ ԵՄ-ի անդամակցությունը ՀՀ ռազմավարական նպատակն է, իսկ ԵՄ-ն իր հերթին չի ժխտում հետևանքաբեր դրա հավանականությունը, ապա այսօր արդիական է անհրաժեշտ քայլերի ձեռնարկելու ԵՄ-ի նորմերին ու սկզբունքներին ՀՀ բոլոր ենթահամակարգերի համապատասխանեցման նպատակով, որի հիմնքերն արդեն իսկ դրվել են ԵՄ-ի-ին ու ԵՄ-ին ՀՀ անդամակցության շրջանակներում վերը ներկայացված ներքաղաքական քարեկեցումներով:

Եվրոպական տարածաշրջանում գործառնող կազմակերպություններին ՀՀ անդամակցության արդյունքների ու զարգացման հետևանքների ուսումնասիրության ու քաղաքակրթական վերլուծության ամփոփումը բույլ է տալիս կատարել հետևյալ **եզրակացությունները**, որոնք ներկայացված են առեւտրախոսության **վերջաբանում**:

1. 20-րդ դարի վերջը միջազգային հարաբերություններում բնութագրվեց արմատական փոփոխություններով, երբ Խորհրդային Միության ու Եվրոպայի սոցիալիստական երկրների համակարգի փլուզմամբ պատմության գիրքն անցան ռազմաքաղաքական դիմակայությանն ու սառը պատերազմը: Այսօր տեղի է ունենում նոր աշխարհակարգի ձևավորման գործընթաց, փոխվում է ուժերի հարաբերակցությունը պետությունների միջև, քաղաքականապես ու տնտեսապես ամրապնդվում և ուժեղանում են նորակերպ պետություններ և դրանց միավորումները, կատարելագործվում են միջազգային գործընթացների կարգավորման մեխանիզմները: Ներկայում այդ լայնածավալ գործընթացների շարունակությունն են հանդիսանում հետխորհրդային տարածքում անվտանգության և համագործակցության համակարգերի ձևավորումը, եվրոպական ու տրանսատլանտյան կառույցների ընդլայնումը և փոխակերպումը, համաշխարհային անվտանգության ապահովման գործում միջազգային կազմակերպությունների տեղի և դերի վերանայումը, եվրոպական ինտեգրման շրջանակների ընդլայնումը և այլն:

2. Վերը նշված գործընթացները վճռորոշ հետևանքներ ունեցան եվրոպական տարածաշրջանում գործառնող գրեթե բոլոր միջազգային կառույցների համար, քանի որ նոր անդամներով դրանց համայնքում ոչ միայն ենթադրում էր որակյալ հետևանքներ՝ հաշվի առնելով առավել միասնական ու համաձայնեցված միջազգային քաղաքականության մշակման ու իրականացման հետևանքները, այլև առաջ էր քաշում քաղաքակրթական տարաբնույթ խնդիրներ՝ սկսած տեխնիկական առավել ընդլայնված կազմով կազմակերպությունների արդյունավետ կառավարման հնարավորությունից մինչև զուտ քաղաքական ենթաստեղծումն արևմտյան ու հետխորհրդային տարածաշրջանի պետությունների՝ հաճախ հակադրվող շահերի համադրումը, որն անհրաժեշտ պայման է ինչպես տեղական, այնպես էլ համաշխարհային մակարդակով վտանգների չեզոքացման համար: Մասնավորապես, ԵՄ-Կ-6, ԵՄ-6 և ԵՄ-6, իրենց հերթին կանգնեցին նորաստեղծ իրավիճակում իրենց դերի հատկեցման, հետևողական քննարկման երկրների հետ հարաբերությունների հաստատման անհրաժեշտության, իրենց արևելյան սահմանների մոտ առաջացած վակուումի լրացման ու անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրների առջև: Այդ տարածաշրջանի հակամարտությունների խաղաղ լուծման, քաղաքական ու սոցիալ-տնտեսական կայունության մեջ ԵՄ-ի երկրների շահագրգռվածությունն ուղղակիորեն պայմանավորված է Եվրոպայում անվտանգության քաղաքական, տնտեսական ու սոցիալական չափումների ապահովմամբ, իսկ, մասնավորապես, Հարավային Կովկասում՝ նաև Լեռնզեռնիկ հարուստ ռեսուրսների օգտագործման հնարավորությամբ:

3. Միջազգային կառույցների ընդլայնումն այլևս քաղաքական իրողություն էր, որն առաջ էր քաշում երկու ասանցքային խնդիր. առաջինը, այդ կառույցները իրենք և՛ տեխնիկապես, և՛ գաղափարապես պետք է աղապատագրվեին նոր իրավիճակին, և երկրորդը, նորասկսյալ պետությունները ինտեգրվող աշխարհում պետք է ընտրեին իրենց համար առավել նպաստավոր տեղը՝ հաշվառելով յուրաքանչյուր տարբերակի շահավետության աստիճանը: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի պետությունների համար օրակարգային խնդիր դարձավ իրենց արտաքին քաղաքականության նոր գերակայությունների սահմանումը, որոնք ընտրությունը կատարեցին հօգուտ ԵՄ-Կ-6, ԵՄ-6, ԵՄ-6, ԵՄ-6-ի և այլ եվրոպական միջազգային կազմակերպությունների հետ ինտեգրացման գործընթացի: Հետսոցիալիստական երկրներից յուրաքանչյուրն ուներ զրանց միանալու իր օրոշյուն շարժառիթները. երե, օրինակ, Լեհաստանի, Հունգարիայի, Չեխիայի համար դա կնշանակեր նախ և առաջ հողերն ու մշակութային վերադարձն դեպի Եվրոպա, ապա դրանց արևելյան հարևանների, այդ թվում նաև Հայաստանի համար, դա ժողովրդավարական անցման իրականացման, ազգային խնդիրներն առաջ քաշելու անգնահատելի հնարավորություն էր, սակայն արդեն որպես միջազգային հանրության լիիրավ անդամ: Հայաստանի ընդգծված կողմնորոշումը դեպի Եվրոպա լիովին արդարացված էր՝ մշակութային միասնության և թե՛ քաղաքական շահավետության տեսանկյուններից:

4. Տեղի ունեցող համաշխարհային տեղաշարժերի համատեքստում Հարավ-կովկասյան տարածաշրջանը ներկայումս հիմնականում ընկալվում է որպես ինքնուրույն աշխարհագրական միավոր, որն ընկած է Եվրոպա-Ասիա-Մերձավոր Արևելք հանգույցակետում՝ դրանից բխող հնարավորություններով և մարտահրավերներով: Այս հանգամանքը, ներկայումս ՀՀ արտաքին աշխարհից մեկուսացման անհնարիմության պայմաններում, կարևորագույն խնդիր է դարձնում ճիշտ կողմնորոշման ընտրությունը: Եվրոպական կառույցներում Հայաստանի հետևողական ու արդյունավետ գործունեությունը պայմանավորում է ՀՀ արտաքին քաղաքականության մեջ, փոփոխման ակզորների կիրառմամբ, որպես առաջնություն՝ եվրոպական ինտեգրացման ընտրության ճշմարտացիությունը:

5. Հասարակության և պետության եվրոպական մոդելը, իսկապես, յուրահատուկ է. այն արտացոլում է մարդկային արժանապատվության՝ որպես բարձրագույն արժեքի վրա հիմնված արդար աշխարհակարգի նկատմամբ ձգտումը: Հենց Եվրոպայում է մարդկային արժանապատվության խնդիրն ստացել համընդգրկված բնույթ: Այս մոդելի հիմքում ընկած են 4 հիմնական սկզբունքներ՝ մարդու իրավունքների անխախտելիությունը; մշակույթը՝ որպես դաստիարակության և առաջընթացի միջոց; կայուն զարգացումը, որը ենթադրում է տնտեսական զարգացում, սոցիալական արդարություն ու շրջակա միջավայրի պաշտպանություն; միջազգային հարաբերություններում քաղաքական մտտեցման կիրառումը: Մրանով է պայմանավորված, որ նախկինում տոտալիտար վարչակարգ ունեցող հետխորհրդային պետությունները ներկայումս ձգտում են քաղաքական ու հասարակական հարաբերությունների վերջնալս մոդելի կառուցմանը՝ եվրոպական ընտանիքին ինտեգրվելու նպատակով: Մակապ կովկասյան աշխարհաքաղաքական դաշտում Եվրոպան զուտ արտաքին դերակատար է, և իր ներկայիս կառուցվածքային և ինստիտուցիոնալ որակով, որն այսօր իր մեջ կրում են Եվրոպայում գործառնող միջազգային կառույցները, այդ թվում ԵՄ-6, այն նաև համեմատաբար նոր դերակատար

է: Իսկ Հարավային Կովկասի պետությունները եվրոպական գործընթացներում դեռ քաղական երկար ժամանակ շարունակելու են լինել քաղաքականության օրյեկտներ: Մուրյելտության տարբերը, որպես կանոն, ի հայտ են գալիս այն ժամանակ, երբ եվրոպական պետությունները լուծում են որոշակի սկզբունքային հարցեր իրենց անմիջական հարևանների հետ: Սակայն նույնիսկ որպես օրյեկտ՝ պայմաններ են ստեղծվում քաղաքական համակարգերի ժողովրդավարացման համար, ինչը, համահունչ է «երկխոսության» երկու կողմերի համար էլ, լինի դա Եվրոպան՝ ի դեմս իր որևէ միջազգային կառույցի, թե՛ նրան ինտեգրվել գլոբալացող որևէ պետության:

6. ԵՄ-Կ-6-ի ու ԵՄ-6-ի հետ Հայաստանի համագործակցության գործընթացն ու արդյունքները, այդ կառույցների շրջանակներում, ինչպես նաև նրանց կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերի ու նախաձեռնությունների իրականացումը ոչ թե ինքնանպատակ է, այլ իրական ժողովրդավարության կառուցման միջոց: Հայաստանի, և, ընդհանրապես, հետխորհրդային տարածքի ժողովրդավարական անցման գործընթացները բացահայտում են այդ հասարակությունների քաղաքական զարգացման մի քանի չափումներ, որոնք ունեն տարբեր ուղղություններ. մի դեպքում դա շարժում է դեպի ժողովրդավարական ինստիտուցիոնալ գործընթացների ամրապնդում, մյուս դեպքում՝ անցյալից ժառանգված ոչ ժողովրդավարական կառույցների ու նորաստեղծ ինստիտուցիոնալ գոյացումները: Հնարավոր տարբերակ է նաև այդ նոր կառույցների ու ընթացակարգերի նպատակամետ օգտագործումը՝ ավտոկրատական կառավարման նոր տարատեսակների ձևավորման քաղաքական նպատակով: Ուստի պաշտոնապես ժողովրդավարական համարվող քաղաքական ինստիտուցիոնալ ներքում հաճախ կարող են «ոչ ժողովրդավարական» խաղեր վարվել: Նման պայմաններում պաշտոնական ինստիտուցիոնալ և արտաքինապես ժողովրդավարական ընթացակարգերը կարող են (րավակասին արդյունավետ կերպով) որպես «քող» օգտագործվել ոչ ժողովրդավարական վարչակարգի տարբեր տեսակներում ներառյալ դրանց խտանալին մեկը: Նմանապես հետխորհրդային տարածքում, այդ թվում նաև Հայաստանում լայնատարած երևույթ է արտաքինապես ժողովրդավարական ինստիտուցիոնալ և ընթացակարգերի օգտագործումն իշխանության էլիտար-օլիգարխիկ քաշման և վերադարձության այս կամ այն մեկը թողարկելու նպատակով, ընդ որում՝ քաղաքական և տնտեսական իշխանության համակցության գերակայությամբ:

7. Ժողովրդավարության ձևական իրականացումը, օրինակ, ժողովրդավարական ինստիտուցիոնալ և ընտրական ժողովրդավարության ընթացակարգերի ձևավորումը դեռևս երաշխիք չէ դեպի դե-ֆակտո ժողովրդավարություն միակողմանի շարժման ու դրա հաստատման համար: Պաշտոնական ընտրական ընթացակարգերը հաճախ հանդես են գալիս ոչ թե ընտրական ժողովրդավարության՝ որպես ժողովրդավարական համախմբման մեխանիզմի միջանկյալ փուլի հիմնական բաղադրիչ, այլ որպես բողոքի այլ քաղաքական իրողություն, որն ապահովում է ոչ ժողովրդավարական վարչակարգի մի տարատեսակից մյուսին անցումը: Այսօր երրորդ աշխարհին բնորոշ ժողովրդավարության ձևի և բովանդակության միջև առկա է խզում, որն ունի առավելապես ինստիտուցիոնալ բնույթ: Աճուշտ, ոչ մի քաղաքական համակարգ իր պաշտոնական ինստիտուցիոնալ կանոնակարգին խիստ համապատասխան չի գործառնում, սակայն, մասնավորապես, Լատինական Ամերիկայի, Ասիայի, Աֆրիկայի և հնդկոստամբուսական տարածաշրջանի երկրներում առկա ժողովրդավարական համակարգերի մեծամասնության յուրահատկությունն այն է, որ քաղաքական ինստիտուցիոնալ այնտեղ դեռևս չափազանց բույլ են մարդկանց, դրանք խնդիրների ներկայացուցչությունը, սահմանադրության գերակայությունը և օրենքի գերիշխանությունը, ինչպես նաև գործադիր իշխանության կանոնակարգությունների սահմանափակումն ապահովելու համար: Սա բնութագրական է նաև Հայաստանի քաղաքական համակարգի համար: Բայց և ժողովրդավարական անցման գործընթացի հաջողությունը պայմանավորվում է նաև իշխանությունների ղրևորած քաղաքական կամքով՝ ավարտին հասցնելու այդ անցումը:

8. Քաղաքական ինստիտուցիոնալ, նույնիսկ երե դրանք կառուցված են լավագույն ժողովրդավարական սխեմաներով, դեռևս չեն կարող երաշխավորել ժողովրդավարական անցման հաջողությունը: Համախմբված ժողովրդավարության հիմքը միայն ինստիտուցիոնալ կայունությունը չէ. ինստիտուցիոնալ ու ընթացակարգերից բացի այն պետք է կիրառվեն նաև հասարակության մեջ արժանավորված ժողովրդավարական քաղաքացիականության նորմերի և արժեքների, յուրատեսակ «սոցիալական կապիտալի» ու ամուր սոցիալ-տնտեսական համակարգի վրա, որի առավել կատարյալ ձևը եվրոպական մոդելն է: Այստեղ է, որ կարևորվում են եվրոպական կառույցների օժանդակությամբ Հայաստանում իրականացվող քաղաքակրթական ինստիտուցիոնալ սկսած քաղաքական, սոցիալական, տնտեսական համակարգերի գործառնության համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի ձևավորումը

մինչև կունկրետ նպատակային ծրագրերի իրականացում ուղղված պետական իշխանության բևերի տարարածանմանը, դատական համակարգի կատարելագործմանը և զրա անկախության մեծացմանը, կոտուպցիոն ավանդույթների վերացմանը և այլն, որոնց վերաբերյալ ԵԱՀԿ-ն և ԵԽ-ն հայտնել են իրենց գոհունակությունը՝ շարունակելով իրենց աջակցությունը ՀՀ քաղաքական ոլորտում եվրոպական չափորոշիչներ ու «ժառանգություն-պետություն» քաղաքակիրքի հարաբերություններ հաստատելու ուղղությամբ:

9. ԵԱՀԿ-ին ու ԵԽ-ին անդամակցությամբ Հայաստանին աննախադեպ հնարավորություն է ընձեռել լայնորեն օգտագործել այդ երկու կազմակերպությունների ներստը՝ վերոնշյալ բնագավառների գործառնությունը եվրոպական չափորոշիչներին համապատասխանեցնելու համար: Միաժամանակ, վկայակոչելով ինտեգրացման ընթացքում մշակութային ինքնության, պետական ինքնիշխանության պահպանման հետ կապված խնդիրների երևան գալը, եզրակացվում է, որ ինտեգրացումը չի կարող դիտարկվել իբրև բացառապես դրական երևույթ: Համադրելով եվրոպական կազմակերպություններին ՀՀ անդամակցության դրական ու բացասական ազդեցությունները, ցույց է տրվում, որ առկա ու սպասվելիք դրական արդյունքները, միանշանակորեն առավել ծանրակշիռ են՝ ընդգծելով սակայն *«ձեռնարկական առաջադիմ»* ընտրողական մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտությունը: Միաժամանակ հիմնավորվում է, որ գրանցված առաջընթացն ու հետագա ձեռքբերումները կարող են կայուն հիմք ծառայել արտաքին քաղաքական ԵՄ-ին անդամակցության նպատակով անհրաժեշտ քաղաքականության մշակման ու իրականացման և այլ հարցերի արդյունավետ լուծման համար:

10. ԵԱՀԿ-ում և ԵԽ-ում անդամակցության արդյունքում որդեգրած սկզբունքների գործնական իրականացումը կարող է ըստ ամենայնի սպասելի է ԵՄ-ի հետ ՀՀ-ի ալիքի սերտ համագործակցության հաստատումը: ԵԱՀԿ-ում ու ԵԽ-ում ՀՀ անդամակցության ընթացքում ստանձնած պարտավորությունների կատարումը, թեև որոշակի վերապահումներով, եվրոպական փորձագետներին այսօր թույլ է տալիս խոսել ՀՀ իրավական ու քաղաքական դաշտերի՝ եվրոպական չափորոշիչներին համապատասխանության մասին, և որոնց շնորհիվ ավելի արագ կարող են իրականացվել ԵՄ-ի անդամակցության համար անհրաժեշտ Կապենհագենյան քաղաքական չափանիշները: ԵԱՀԿ-ում և ԵԽ-ում անդամակցության արդյունքում որդեգրած սկզբունքների գործնական իրականացումն իրական հիմքեր կապահովի Բյուսեյի հետ ավելի սերտ հարաբերություններ հաստատելու նպատակին Հայաստանի ներպետական վարչական մեքուսմ ուղղորդելու համար:

11. ՀՀ-ԵՄ ներկայիս հարաբերությունների իրավական ու ինստիտուցիոնալ հիմքերը զգալի հնարավորություններ են ընձեռում Հայաստանին՝ օգտվել ԵՄ-ի օժանդակության ծրագրերից՝ խթանելու ՀՀ տնտեսական ու քաղաքական զարգացումը: Տարածաշրջանային նշանակության ծրագրերի տնտեսական ու քաղաքական արդյունքները համապատասխանում են ՀՀ արտաքին տնտեսական քաղաքականության հիմնական նպատակներին, որոնք են՝ Հայաստանին էներգետիկ անվտանգություն ապահովումը, մասնավորապես, էներգակիրների և էներգիայի արդյունքների բազմազանացումը, հաղորդակցության ուղիների զարգացումը, արտաքին շուկաների որոնումը և արտահանմանն աջակցությունը և այլն: Այդ ծրագրերի շարունակականության ապահովումն ու զրանցում Հայաստանի ընդգրկվածության խորացումը մեծապես կնպաստեն վերը նշված արտաքին տնտեսական խնդիրների գործնական իրականացմանը:

12. ԵՄ-ի կողմից Հայաստանը՝ որպես Հարավ-կովկասյան տարածաշրջանի մաս դիտարկելու դիրքորոշման շարժառիթները և պատճառները փաստում են, որ Հարավ-կովկասյան տարածաշրջանը՝ իր ամբողջության մեջ, և ոչ միայն առանձին երկրներն են այսօր հետաքրքրում ԵՄ-ին՝ որպես իր ռազմավարական շահերի հանգուցակետ (մեծան մոտեցումն ամրագրվել է նաև ԵՄ-ի Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ): Սակայն սրանով անտեսվում են առանձին պետություններում տեղի ունեցող ներքին ու արտաքին քաղաքական գործընթացները, ինչն ավելի է հեռացնում ԵՄ-ին ՀՀ անդամակցության հնարավորությունը:

13. Եվրոպայում տեղի է ունեցել Հարավային Կովկասի հակամարտությունների կարգավորման հեռանկարների լուրջ վերախմբումներում՝ ռազմա-քաղաքական ու տարածաշրջանի հարթությունից շեշտադրումները փոխարելով սոցիալ-տնտեսական հարթություն և գերակայությունը տալով այնպիսի համամարդկային արժեքներին, ինչպիսիք են մարդու իրավունքները, քաղաքացիական հասարակությունը և սոցիալական զարգացումը:

Հաշվի առնելով ատենախոսության մեջ արձարվող քաղաքական համակարգի ժողովրդավարացման, այդ նպատակով եվրոպական տարածաշրջանում գործառնող կազմակերպությունների հետ ՀՀ առավել սերտ ինտեգրման ու հեռանկարում եվրոպական համայնքի լիարժեք անցան դառնալու գործընթացների հետ կապված խնդիրների հրատապությունը, վերջապես մեծանակելու են նաև հետևյալ գործնական *առաջադրությունները*:

1. հաստատել համագային կոմսենսուս Հայաստանի եվրոպական քաղաքականության հիմնական ուղղությունների վերաբերյալ,
2. ապահովել քաղաքացիական հասարակության ինստիտուտների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում, քաղաքական որոշումների ընդունման գործընթացում նրանց առավել ակտիվ մասնակցություն,
3. ստեղծել պետական մարմինների գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողության մեխանիզմներ,
4. խթանել ԵԱՀԿ-ի, ԵԽ-ի, ԵՄ-ի ծրագրերին, տարածաշրջանային նախաձեռնություններին և այլ միջոցառումներին ՀՀ մասնակցությունը,
5. ակտիվացնել ԵՄ-ի հետ քաղաքական համագործակցության խորացումը, փորձագետների ու գիտական աշխատողների միջև երկխոսությունը,
6. ապահովել եվրոպական կառույցների օժանդակությամբ իրականացվող ծրագրերի արդյունավետությունը, նրանց կողմից ներկայացվող և հայկական կողմի համար լիովին ընդունելի առաջադրությունների անվերապահ կատարումը,
7. երիտասարդ սերունդների համար անցկացնել համակարգային լայնածավալ կրթական միջոցառումներ, ինչպես նաև կազմակերպել երկարաժամկետ *«օգովագոյին եվրոպալիս»* ուղղված եվրոպական համայնքին ինտեգրացման անհրաժեշտության ու առավելությունների ներկայացմանը ներառյալ տարբեր երկրների երիտասարդների փոխանակումների, շփումների կարգավորումը՝ գոյություն ունեցող եվրոպական մոդելներով,
8. ինստիտուցիոնալ զարգացման ու կայունության համար ՀՀ բոլոր նախարարություններում ու կառավարական մարմիններում ստեղծել ԵՄ-ի հետ հարաբերությունների համար պատասխանատու բաժիններ և կազմակերպել քաղաքացիական ծառայողների համապատասխան ուսուցողական ծրագրեր, քանի որ Հայաստանի մեծ փոքր երկրների համար առկա է վտանգ, որ դրանց պետական իշխանական կառույցները կունենան ԵՄ-ի չափորոշիչներն արագորեն և ամբողջապես ընկալելու ու վերջիններիս անպատասխան կարողությունների պակաս:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հետևյալ հրատարակումներում.

1. Հ. Սիմոնյան, «Եվրոպայի խորհրդին և Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությանը ՀՀ ինտեգրման գործընթացը» // «Վասն արդարության»: Իրավական գիտամեթոդական հանդես, 3(53) : Վանաձոր, ՀԱԽԿ, 2005. - էջ 6-10:
2. Հ. Սիմոնյան, «Եվրոպայի խորհրդին և Եվրոպայի անվտանգության ու համագործակցության կազմակերպությանը ՀՀ անդամակցության արդյունքները ներպետական քաղաքական գործընթացներում» // «Կամերա»: Գիտական աշխատանքների ժողովածու, 4(25): Երևան, «Աստղիկ» հրատարակչություն, 2005. - էջ 183-193:
3. Հ. Սիմոնյան, «ՀՀ սոցիալ-տնտեսական ոլորտի հիմնախնդիրները Հայաստան-ԵԱՀԿ համագործակցության շրջանակներում» // Հայաստանի Պետական Շարտարագիտական Համալսարանի (Պոլիտեխնիկ) տարեկան գիտաժողով: Ելույթների ժողովածու, Երևան, ՀՊԵՀ, 2005: 3 հատորով, հատոր 3, էջ 877-881:
4. Գ. Մ Ջնյոյան, Հ. Ս. Սիմոնյան, «Հայաստան-Եվրոպական միություն հարաբերությունների ընթացքը և զարգացման հեռանկարները» // Մեծագրություն : Հեղինակային հրատարակչություն, Երևան, ՀՊԵՀ տպարան, 2005. - 63 էջ:

СИМОНЯН АСМИК САРКИСОВНА
РЕЗУЛЬТАТЫ И ПЕРСПЕКТИВЫ ЧЛЕНСТВА РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ В ЕВРОПЕЙСКИХ СТРУКТУРАХ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02-“Политические институты и процессы”.
Защита состоится 7 февраля 2007 г. в 14⁰⁰ ч., в специализированном совете 013 ВАК, по адресу: 0025, Ереван, Абовяна 52а, ЕГУ.

РЕЗЮМЕ

Целью диссертационной работы является исследование и анализ последствий расширения европейских международных организаций, процессов становления и развития отношений РА с этими организациями, оценка процессов выполнения обязательств перед этими организациями, демократизации политической системы и улучшения конституционного порядка, выявления результатов и перспектив сотрудничества, а также разработка практических рекомендаций, обеспечивающих эффективность процессов интеграции Республики Армения в европейскую семью.

Научная новизна исследования сводится к следующему:

- систематизированно и основательно исследуются процессы членства РА в ОБСЕ и СЕ, а также расширения деятельности этих организаций и ЕС на постсоветском пространстве,
- в качестве проблемы первостепенной важности обосновывается основополагающая роль европейской региональной интеграции для Армении,
- с позиций сохранения суверенитета и обеспечения независимой внешней и внутренней политики РА анализируется целесообразность формирования отношений РА с европейскими структурами и развития интеграционных процессов,
- аргументируется заинтересованность Южно-Кавказского региона и, в частности, РА в сотрудничестве с европейскими структурами на основе равноправных отношений,
- анализируются результаты членства РА в ОБСЕ и СЕ в политической сфере и обосновывается, что достигнутые положительные сдвиги являются основой для дальнейших усовершенствований в процессе демократизации политической системы, становления гражданского общества и “европеизации” армянской политической культуры,
- констатируя существенный прогресс РА не только в политической, но и в экономической и социальной сферах, аргументируется необходимость селективного отношения к “предложениям” Европы, особенно, в контексте проблемы сохранения культурной самобытности,
- исследуя процесс реформирования политической системы РА, обосновывается, что членство РА в ОБСЕ и СЕ создает реальные предпосылки не только для более тесного сотрудничества с ЕС, но, в перспективе, и для полноправного членства в этой структуре,
- используя богатый фактический материал и методологию теории неофункционализма, освещается процесс становления и развития отношений РА с ЕС, а также истолковываются и всесторонне анализируются результаты их сотрудничества,
- обосновывается, что используемый ЕС принцип “политической обусловленности” может оказаться неэффективным для стран постсоветского пространства, в том числе, и для демократизации политической системы РА, если баланс “политическая цена – политическая выгода” окажется неоптимальным,
- анализируются возможные перспективы развития отношений РА с ЕС на фоне преследуемых целей и деятельности стран Южно-Кавказского региона, а также предлагается ряд предложений, которые могли бы способствовать более тесной интеграции Армении в европейские структуры и ее становлению полноправным членом европейского сообщества.

Симонян

05.02.2013



Տպագրության եղանակը՝ ռիզոգրաֆիա:
Ֆորմատ՝ 60x84 1/16, քուրք օֆսեթ, N 1:
Տպաքանակ՝ 60:

Տպագրված է «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի տպարանում:
Ք. Երևան, Տերյան 72
Հեռ. 58.22.99, 56.24.52
E-mail: info@limush.am

ՀՀ Ազգային գրադարան



NL1793228

